

Ա. ՀԱՐՈՆՆԵՐ ՏԱՏՈՒՐԵԱՆ

(1886 - 1965)

Գիծեր կեանքին. - Գիծեր նկարագրին. - Գործերը եւ ակնարկ անոնց բովանդակութեան. - Քննական հայեացք - «Սիւն»ի երկու գրախօսականները. - Հին Ահարոնը եւ նոր Ահարոնը. - Յատկանշական գիծերը իր բանաստեղծութեան. - Տրտմութեան երգիչը. - Սեռային յուզականութիւնը. - Ինքնավերլուծումը. - Հոգեպաշտութիւնը. - Խորհրդապաշտութեան ձգտումները. - Իր տեղը մեր գրականութեան մէջ:

Գաղափարի պաշտամունքին նուիրուած բանաստեղծի մը մահով մեռաւ Ահարոն Տատուրեան, Փարիզի հիւանդանոցներէն մէկուն մէկ անկիւնը՝ ստուերներուն տակ գիշերային տրտում լոյսերու, առանց կեանքէն իր բաժինը առնելու, առանց իսկապէս ապրած ըլլալու:

«Ներքէ՛ որ, Տէր, մեծ մարդ ըլլալ չըկերցայ, Զբարժիք ինձ այդ մեծ կոչումն իբր ընծայ. Այլ քարշ եկայ, գերդ քափառիկ ունայն մարդ, Ունայն, ինչպէս իմ մարագիս խոտն ու յարդ»:

(Վերստին յաւելում - «Սոսկայ անտառ»)

Հանգի՛ստ յոգնած ու տառապած մարմնիդ, հանգչէ՛ աշխարհ լոյսերուն մէջ, Ահարոն. անուն մը թողած՝ դուն մեկնեցար: Հանգչէ՛ խաղաղ օտար երկնքի տակ, բայց քու սրտովդ Հայաստան՝ ինչպէս միշտ կը ցանկայիր:

Իր թափառական կեանքը այսպէս կը վերջանար մահուան ահաւոր լուծեամբ: Ինքը արդէն լուծեան եւ առանձնութեան սիրահար, ժխորին թշնամի, մենասէր, մենախոհ բանաստեղծ՝ որ թէեւ կեանքին հրապոյրն ունէր սրտին մէջ, բայց չէր մօտենար անոր ու մանաւանդ թէ կը փախչէր: Վերջին օրերը ծերանոցի մը անմխիթար կեանքը ստիպուեցաւ ապրել «Հանգստեան Տան» մէջ Մոնմորանսիի: Ծերանոցէն հիւանդանոց փոխադրուած էր յանկարծ, որովհետեւ դաւաճանած էր իր

սիրտը, այն որ աղբիւրը եղած էր իր այնքան քնարերգակ գեղեցիկ էջերուն: Այս տարուան Յունուար 31ի գիշերը մարեցաւ կեանքին մօմը, արդէն նուազած ու հատած, հանդարտ ու համակամ թողլու համար այս աշխարհը, ինչպէս պաղատողին փափաքած էր երգել մը մէջ՝ ուղղուած երկնքին՝ մահէն առաջ մարելու բոլոր մոմերը, բոլոր իղձերը սրտին:


«Մահէս առաջ կ'ուզեմ տեսնել որ, Տէր իմ, Հաւատարիմ լուսարարն այս տաճարիդ՝ Մարէ բոլոր մոմերն յայտնի, շիք առ շիք, Զի կը վախճամ որ մահէս վերջն ալ վառիմ»:

(Սերը կ'եղբերեցէ՛ - «Մագաղաթներ»)

Ճանչնալ զինքը իր կեանքին ընդհանուր գծերուն ու նկարագրին մէջ՝ անհրաժեշտ պայման մըն է ճանչնալու համար զինքը իր բանաստեղծութեան մէջ: Ծնած Օվաճըզ (Իզմիտի չըջան), 1886, Օգոստոս 30ին, իր ծննդավայրին մէջ ըրած է նախակրթարանի ուսումները, աշակերտած Գաղափարի Միւսթաֆեան վարժարանը եւ երջանիկ բախտով մը անցած Մուրատ-Ռափայէլեան, 1907-1909 դպրոցական երկու տարեշրջաններ բոլորելու եւ ազգային ուսման մէջ կատարելագործուելու նպատակով: Հոն, ինչպէս երբեմն Վարուժանի առաւ եւրոպական մշակոյթի եւ դասական դարձաւ մըն ըրարիքները, հիմը իր հարուստ եւ յղկեալ լեզուին: 1910ին դարձ

ձած է Իզմիտ, ուր տեղւոյն «Բիւթանիա» շարաթաթերթին խմբագրութիւնը վարած է կարճատեւ մը, հոն հրատարակելով նաեւ իր քերթումներէն: Պաշտօնավարած է նաեւ ազգային վարժարաններու մէջ՝ Իզմիտ եւ Պոլիս:

Մասնակցեցաւ Պոլսոյ գրական կեանքին՝ այն խանդավառութեան օրերուն, որ յաջորդած էր Սահմանադրութեան հռչակումին: Մաս կազմեց «Մեհեան» գրական թերթի շարժումին, ոգեւորուեցաւ խորհրդապաշտներու երազներով այն խմբակին հետ՝ որոնց անունը կապուած է այդ թերթին. Յ. Օշական, Վ. Թէքէեան, Կ. Զարեան, Գեղամ Բաքսեղեան, Վ. Թաթուլ, Լ. Խաճանեան էին իր ընկերները գրական կոչունքին: Դարձաւ փութով ու շարունակ դէմք մը՝ բայց չաճապարեց երբեք հատորներ տալու, հակառակ իր ժամանակակից կարգ մը զբոսնորս: Հայկական մեծ աղէտի օրերուն ունեցաւ իր տառապանքի բաժինը: 1915ին Իզմիտի հայերուն ընդհանուր տեղահանութենէն քանի մը ամիս առաջ՝ Ահարոն անհատապէս աքսորուած է Նիկիա: Հոն լճի ափին գրած է «Գիւղի սիւքեր, եարոջ երգեր»ը: Անկէ քանի մը ամիս վերջ՝ այն չըջանին տեղահանուած հայերու կարաւանին միանալով կը հասնի Գոնիա 1915ի Օգոստոսին, ուր արդէն հասած էր Իզմիտէն աքսորուած իր ընտանիքը՝ մայրը, եղբայրը եւ քոյրը զաւակներով: Այդ օրէն սկսեալ ապրած է խաղաղ էրէյլի (Գոնիա) մինչեւ 1919ի դարունը եւ ապա վերադարձած է Իզմիտ եւ Պոլիս: Մինչեւ 1922 պաշտօնավարած է վերստին ազգային վարժարաններու մէջ: Նոյն տարին դացած է Վառնա (Պուլկարիա), եւ յետոյ բաղմամբիւ ուրիշ հայ ուսանողներու հետ անցած Փրակա, Զեխոսլովաքիայի Նախագահին բարեացակամ ասպնջականութեամբ, որով կը բացուէին դռները Փրակայի համալսարանին՝ հայ ժողովուրդի տառապեալ զաւակներուն առջեւ: 1923ի կէսէն մինչեւ 1928 մնացած է Փրակա, հետեւելով համալսարանի գրական բաժնին: Բայց յետոյ պէտք



Ահարոն Տատուրեան, Փրակա գտնուած շրջանին, 1925ի ամառը

էր ապրել: Ֆրանսայի հայ դաշնութիւն մէջ փնտռեց հուսկ իր կայանը: Մարտիլիա ու Փարիզ եղան իր նախընտրած քաղաքները, մանաւանդ Փարիզ՝ քաղաքակրթութեան մեծ ուստանը՝ ուր կեանքին մեծ մասը անցուց, ուսուցչութիւն ընելով Դըպրոցատէր տիկնանց վարժարանին մէջ՝ Բէնի, եւ առեւ մ'ալ Սեւրի Մուրատեան վարժարանը, 1936էն մինչեւ միջազգային երկրորդ պատերազմը: Հոս է որ ճանչցայ զինքը: Ահարոն մանուկի մը միամտութիւնն ու պարզութիւնը ունէր, կը խանդավառուէր ոչինչ բանով, եւ ոչինչով ալ յանկարծ մեծ տրտմութիւններու մէջ կը կորսուէր: Միշտ ունէր պատմելիք բան մը իր անցեալի յուշերէն, Մուրատ-Ռափայէլեանի դպրոցական չըջանէն, Գ. Վարուժանի ընկերութեանէն, անոր «Միջատ»ի գէպէն, իր կրած տպաւորութիւններէն Ս. Ղազարու գիտական չըջանակէն, անոր կարկառուն դէմքերէն: Հաճելի էր ուն-

կենդանի իր խոսակցությունները երբ կը պատմեին Փրակայի մէջ, անցուցած կեանքին մանրամասնութիւնները, տառապանքները, յուսախաբուծիւնները, ազգային զէմքերու մասին իր սրամիտ ակնարկները կարճ, քանի մը բառով, յատկանշական ընդգծումներով. յետոյ իր խոշոր ու թաւալուն ծիծաղը՝ որուն կը յաջորդէր յանկարծական կտրուկ լուծիւնը, ու մէկ աչքը դոյ՛ն՝ անոյշ նայուածքով դիտողի իր կերպարանքը, տեսնելու համար թէ ինչ տպաւորութիւն թողած է իր խօսքը մտիկ ընողին: Քաղցր էր իր ընկերութիւնը, որովհետեւ պարզ էր ամէն ինչ, բընական, առանց կեղծիքի: Երբ «Մաղաղաթներ» հատորը լոյս տեսաւ 1938ին, անտու պէս հրճուանքի պահեր ունէր, տեսնելով վերջապէս իր տարիներու երազը յանկարծ իրականացած, մանաւանդ որ առաջին հատորն էր, ծերութեան զաւակի մը պէս գուրգուրալի եւ սիրելի: Զէր ունեցած պատեհութիւնը այդ թուականէն առաջ շարելու քանի մը հատորներ, ինչպէս անտաղանդ ուրիշ բանաստեղծներ կը փութան յաճախ յուշարձան մը թողուլ (հոգ չէ թէ անարժան եւ անարժէք) իրենց կեանքին: Օր մը աչակերտներու խումբի մը առջեւ՝ իր երգերէն հատ մը կարդացի ու տուի իմ մեկնութիւնս: Աչքերը փայլեցան ու թօթուեց ձեռքս: Արդեօք նո՞ր միտք, նո՞ր եղանակ տուի իր երգին, չեմ գիտեր. բայց հաճելի անցաւ մեկնութիւնը: Ահարոն «Մաղաղաթներ»ու մէջ մեկնութեան կարօտ բանաստեղծ մ'է. այլաբանական, մանաւանդ թէ խորհրդապաշտական թաքուն երանգներով մերթ կը մընայ անթափանցելի:

Իր նկարագրին գիծե՞րը: Այլասէր, բարի, համեստ, համակամ իր անձին մէջ եւ իր շուրջը անցուդարձին, աւաղո՛ւ մը միայն սրտին հրէհն ու աւերը արտայայտելով: Իրեն տիպիկ արտայայտութիւններ են օրինակ սա տաղերը. «Զեմ ունեցած որեւէ փայլուն յաջողութիւն, աւա՛ղ: 1902էն ի վեր մտած եմ հայ գրականութեան մէջ եւ երբեք չեմ կրցած այդ ճահիճէն դուրս ելլել: Այժմ կը գտնուիմ

Մոնոթրոնսի ծերանոցը, ... եւ կը սպասեմ մահուան, անփառունակ կեանքէ մը վերջ, աւա՛ղ: Քանի մը բանաստեղծական գիրքեր հրատարակած եմ, որոնք մոռցւած կամ կորսուած են. երանի՛ր ինձի: Ուղեցի Հայաստան երթալ, սակայն Հայաստանը ա՛յնքան հեռու է: Աւա՛ղ: Ա՛յսքան, ա՛յսքան, ա՛յսքան»¹:

Ահաւասիկ իր բառերով, իր ընդգծումներով ինքնակենսագրութիւն մը՝ ուր ամբողջ Ահարոնը կայ իր խոնարհամիտ ինքնաճանաչման բոլոր գեղեցկութեամբը, պարզութեան բոլոր վսեմութեամբը:

ԳՈՐԾԵՐԸ

Վերջին պահուն մնացած, աճապարանքով մին միւսին ետեւէն լոյսին տուաւ իր խոկումները, իր երգերը՝ Մաղաղաթներ (1938), Պոետականք (1939), Սոսեաց անտառ (1949), Երկներ երկին (1957), Բազմիմներու կրակին դէմ (1958), Կարմիր աւետարանը (1959) հատորներով, Փարիզի մէջ², եւ ապա լռեց...

ՄԱԳԱՂԱԹՆԵՐԸ ստուար հատոր մ'ըն է, որ կ'ընդգրկէ Ա) «Հինդ տաղաշրջաններ» (իր բառով), Բ) «Սիրտս կարմիր վարդերով», Գ) «Ինքնախոսակցութիւն», Դ) «Գիւղի սիւքեր, եարոջ երգեր» բաժինները: Այլապէս ներշնչումներ, բայց միայն իրարու հետ հոգեբանական խորքով: Այդ խորքը միակ բառով կը յանգի սիրոյ երգին մէջ. բայց մինչ մաս մը չարատանջ մարդկութեան տառապանքներով է հիւսուած, միւս մասը ուղղակի իր սրտէն է որ կու գայ: Հինդ տաղաշրջաններէն անոնք՝ որ գրութեան թուական մը չունին, հաւանաբար կը պատկանին Փրակայի իր համալսարանական կեանքի օրերուն, երբ

1. Կենսագրական գիծեր, զոր տուած է Գ. Աճէմեան. տես «Աշխարհ», Ե. տարի, թ. 233 (6 մարտ 1965):
2. Յիշուած բոլոր դրոճերը հրատարակուած են Փարիզի Տէր-Յակոբեան տպարանին մէջ:

բուն կեանքին ու թանձր իրականութիւններու հետ իր բանաստեղծի սիրտը չփման մէջ մտած էր, երբ արդէն քառասունի մօտ հասուն հասակի մարդ էր, բայց դուրսէ իսկական կեանքը դեռ չճանչցած՝ ըզզոյց իր վրայ վայրաքարչօրէն տառապող մարդկութեան մը բոլոր ցաւերը, գալարուն աղաղակները:

Ա. – Առաջին տաղաշրջանը «Ցաղափաղաք»ն է եւ անոր առաջին երգը՝ Լուդորդը, տիպար էջ մը խորհրդապաշտական նկարագրութեան մարդկային սրտի, ուր կիրքին թաղաւորութիւնը կ'երգուի, խաւարին անդունդները կը փառաբանուին եւ առանց երկինքի, առանց արեւու ազդող կրկներու կախարդութիւնները: Մարդն է ծովը, որուն մէջ սիրտը մարդուն՝ Լուդորդը, վերաւոր, բայց եւ յանդուգն առանց երբեք խեղդուելու վախէն զլաստանալու: Քառասուն տարի է որ բանաստեղծը այսպէս խաւարին մէջ ապրած է, ցանկալով լոյսին, որ սակայն միշտ ալ կը խուսափի իրմէ եւ հեռու է, հեռու...: Խորհուրդին տալանը, Մեռեալը կը խօսի, Մագդաղիմէ կը սրբաւայ, Անծանօթ՝ ձայնը, ու այսպէս 13 կտորներ, սրտի մղձաւանջը արձանագրող բանաստեղծութիւններ, այն սրտին՝ զոր «նուադարան խժաճայն» կ'որակէ, եւ որուն յաճախ կը վճռէ չունկընդրել երբեք, բայց ակամայ կը տարուի ու հոգեկան եղբերակութիւնն ալ միշտ նոր արձագանդներով երեւան կու գայ: «Սէրը փուշէ պսակով» երկրորդ տաղաշրջանն է, հոս չկայ թուական. անոնք ալ կը պատկանին այդ օրերու տպաւորութիւններուն, եւ աւելի ուժգնութիւն առած՝ կ'երգեն սէրը, որ պսակուած է փուշերով. սիրտը «թոյնի բաժակ», «վրան վարդ թափած» (Լեդի սպունգով), բայց զարմանալի հակասութեամբ մը կը խոստովանի թէ

«Կեանքիս լեդի այդ սպունգին յանդիման՝
Ծարաւ եմ յար, ինչպէս ոստրէն ծովին դէմ.
Սեղանիս ջուրն ու քերմակ հացը կ'ատեմ,
Խեցի գինովն եմ, ափիս անկուշտ դաշխորան»:

Ահարոն չափազանցութիւնները կը սիրէ, այս պատճառով արտայայտութեանց

մէջ կը մոռնայ պահել պատշաճութիւնները. այս բաժնին մէջ, որ 18 կտորներէ կը բաղկանայ, կան երգեր որոնք այդ տիտղոսով եւ տողերով պէտք չէին երեւնալ, ներկեք իրեն միամտութեանը եւ բարեմիտ արուեստասիրութեանը համար: Երրորդ տաղաշրջանն է «Խեղճ մարդերու պատմութիւնը» 21 երգերով: Խեղճ մարդերը անոնք են որ փողոցն ըրած են տուն եւ կապելաները իրենց սենեակ, անոնք են որ ոչ մայր ունին, ոչ կին, ոչ զաւակ, ոչ տուն. անոնք են որ լուռ կը մեռնին, որ լոյսին տեղ խաւարը կ'ըմպեն, եւ ծեր աշխարհին խաղալիք են եւ հայհոյանքը աղօթքի պէս կը բարձրանայ իրենց շրթներէն անգիտակից, տղէտ ու ստորաքարչ սարսուռներով, մեղքին քաղցրութեան, պարին յորձանքին մէջ մոռցած բուն երջանկութիւնը կեանքին: «Գեհեմականք»ը



Ահարոն Տառնուրեան 1943ին, Մարտիկա

չորրորդ տաղաչըջանը կը բանայ. հոս բանաստեղծը կիրքին հրգեհներն է որ կը վառէ, Դոնիսի աղջիկներ, Մեդիի քափօրը, Միսերուն տերեւաբափը, Գանկերու խրնջոյքը, Ելեկարամարդեր, եւն, ալսպէս 24 երգերով կ'երգէ յաւերժական նիւթին երկրպագութիւնը, քրքիջներու ծնծղաները հնչեցնելով, մահուան համրոյրով օծելով հեշտօրօր զիշերները, իր դարչանքը սփռելով մերկութիւններու եւ մեղքի վրայ:

Հինդերորդ տաղաչըջանը գրած է Ռէնսի 1928-1929, իր առանձնութեան խոհումներուն ծնունդ. «Բանաստեղծը կ'աստուածամայ»: Հոս Ահարոն իմաստասիրական խոհումներու կը հասնի, բանաստեղծութիւնը ներկայացնելով որպէս զարկերակը տիեզերքին: Երազն ու վիշտը, երկու կանթերն, կախուած անհունէն, որ ունայնին վիհէն ելլելով՝ դառնութեան ճիւղ կը խառնեն կեանքին: Կ'ըսէ բանաստեղծը.

«Երազն ունէր բիրտեղայ ծով անասիման,
վիշտն հոն վառուած տօգոյն պատրոյգ նրբալոյս,
Մին յարութեան լուսաբանանէ գերեզման,
Միւսն հոն ննջող՝ քերթող հոգին հողմայոյց»:

Երբ անպարագիծ քառուր բացաւ իր թեւերը, ծաղկեցաւ զիշերը իրրեւ սեւ վարդ, եւ երազն ալ առաւ մարմին եւ սկսաւ թեւածել. բայց վիշտն անկէ անբաժան էր, իր առաջին տաղերգն եղաւ արցունքը, աստղերը կախուած երկինքէն: Այս շեշտով, այս յղացքով Ահարոն կը յառաջէ խորհրդածելով, ընդլայնելով իր նիւթը, երգելով լոյսը, հանճարը, ստեղծագործութիւնները մտքի:

«Լոյսին անգայտ կամուրջներուն վրայ առկախ՝
նրբոր գլխուն գիրար քերթող եւ Աստուած,
Ծրնած երկուսն ալ նոյն տարբէն մըքրնշալ,
Նրման էին եւ կատարեալ յօրինուած»:

Բանաստեղծը այսպէս կը դառնայ արարչական գորութեան հաղորդեալ մը, ստեղծիչ խօսքի, ձեւի, մեծութիւններու, «բանաստեղծը կ'աստուածանայ...»: Այլաբանական այս մերձեցումը, տաղաչարքին բոլոր երգերուն մէջ այլապէս մտ-

քիւններով կը զարգանայ հետզհետէ, կը պայծառանայ եւ մերթ ալ կը մթաղնի՝ շեղելով ուղիղ բանի զիծերէն, առանց սակայն հեռանալու մտադրութեամբ՝ նպատակէն, նոյն մթնոլորտի պարունակին մէջ, 26 երգերու ներքին զաղափարային միութեամբ: Բանաստեղծը աշխարհէն բաժնուած էակ մ'է, բայց զոհուած մարդերուն, ան «Լեռներու ճիւղին վրայ կը դրէ», «ոսկի կը ցանէ ծովերու վրայ», «կու լայ», «կ'աղօթէ», «կը սիրէ ու կը տառապի», «կը քարկոծուի», «կը զիւահարի», եւ հուսկ «կը մեռնի».

«Թողէ՛ միայն սրնաբին մումն արտասուող,
եւ կուրծքին վարդ մ'իքրեւ ծագող արշալոյս,
Մումն պիտի քեւէ երազն իր անհող,
Տառապանքին բոյրն ալ վարդէն սրտայոյց»:

Ու մահէն անդին ահա իր աստուածացումը, քանի որ ինքը արուեստագէտը եղաւ իր փառքին հոյակերտման:

Բ. - «Սիրտս կարմիր վարդերով» երկրորդ բաժինն է «Մաղաղաթներ»-ու: Սիրերգութիւն մը ամբողջապէս, իր սիրուն հիւն նուիրուած. «Սիրելիս, դուք կարմիր վարդն ես ճերմակ մահուան»: Բանաստեղծը օրուան բոլոր ժամերուն բըռնուած է սիրոյ քաղցր ու տառապեցուցիչ զլլիւններէն. Առաւօտ, Միջօրէ, երեկոյ երրեակ բաժանումներով, առաջին եւ երկրորդ մասերը 30ական, երրորդը 23ական նուազներով: Գուցէ մեր բանաստեղծութեան մէջ ոչ մէկ բանաստեղծ՝ այսպէս օրկանիք, միայնար ու երկարաչունչ սիրոյ զերք մը տուած էր: Ահարոն իր այս սիրերգութիւնը գրած է Իգմիտ 1919-1921, երբ տակաւին երազին փայլալայնքը իր երեւակայութեան կու տար թեւեր եւ սըրտին ալ ջերմութիւն: Իրականի բարախուն շեշտը զգալի է արդարեւ, իր յոյսերուն, սպասումներուն բոլոր քաղցրութեամբը. բայց չէ դարձած կողկողիչ երգ, այլ մընացած է կարծէք աւելի զաղափարականի մթնոլորտին մէջ: Սիրոյ կախարդական պալատին գոնիքը կը բախէ առաւ, կէսօր, իրիկուն, վարդեր կ'իյնան կը թօթափին իր հոգիէն ներս, աստղեր կը մա-

րին՝ յետ նշոյլներ տալու, սէրը կը մօտենայ ու յանկարծ՝ կ'անհետանայ, սիրահարին տալով նորանոր վէրքեր: Ութսունեւերեք նուազներու մէջ ի'նչքան զանազանութիւն. անոնք կը թուին կըրկնութիւններ նոյն մտքերու, նոյն պատկերներու, բայց կը տարբերին միշտ ալ տարբեր երանգով մը, տարբեր շեշտով, նոր լարերու զարկով: Դժուար բան է այսքան երկար ու զանազանեալ տողեր հիւսել նոյն նիւթին տալով միշտ նոր շունչ, միշտ նոր կերպարանք: Ասիկա ապացոյց մըն է իր բանաստեղծական երկունքին բեղունութեան: Բանաստեղծին հետ կը տառապի նաեւ իր մայրը՝ ի տես որդւոյն ցաւին, անոր անհուն կարօտանքին ու սրտի դատարկութիւնը աղաղակող երգերուն ունկնդիր: Մօր մը աղապատանքը խառնած է բանաստեղծը իր սիրոյ տեսիլներուն, աւելի ուժգնութիւն՝ եւ ըզզացում՝ զնկու համար գուցէ: Վերջին մասին մէջ՝ որ «Երեկոյ»ն է, կը թուի թէ ան տիրացած ըլլայ իր սիրոյ առարկային, ու տեսնալին տառապանքն ալ մեղմացած ու հանդգած: Բայց երազ է այդ մէջը, քերթողը կը մնայ վերստին իր տեսիլներու սարսուռներով պաշարուած, ու կը խնդրէ իր սիրահարէն

«Սիրէ՛, սիրէ՛, քող շիրմաբան արիւնի,
Վարդակարմիր կըրակներէն շրթունքիդ.
Կը հեծէ սիրտ մ'այնտեղ առանց անուրի»:

«Եւ գըրէ՛ տողն յետին՝ շիրմա մոռացում,
Երբ ես, ո՛ր կիմ, ննջեմ խոտին տակ վրտիտ.
— Աստ հանգչի Սէրն... արտասուէ դուն, ո՛ր
Աստուած»:

«Արտասուէ՛ դուն, ո՛ր Աստուած»ը պէտք է հասկնալ՝ ողորմէ՛, գթա՛լ իմաստով: Դիտելի է որ Ահարոն, մերթ ընդ մերթ այս Սիրերգութեան ընթացքին «Յիսուսի», «Մաղաղիկնէի», «Խաչեալի» պատկերներով կը հիւսէ տողեր, առանց յաճախ տրամաբանական կապի, վնասելով շնորհքի եւ վայելչութեան: Անպատշաճ ու անտեղի այդ արտայայտութիւնները՝ հետեւանք են գուցէ իր մէջ նորութիւն մը տալու, ուժգին եւ ցնցիչ մերձեցումներ ստեղծելու ճիգին. բայց լա-

ւաղոյն պիտի ըլլար եթէ յապաւուած ըլլային: Բայց արդէն բանաստեղծը իր «Վերստին յաւերժութեան» մէջ ներում կը հայցէ Աստուծոյ՝ եթէ երբեք անճիշտ խօսած ու երգած է.

«Ներէ՛ որ, Տէր, չըլտեսցայ շատ յատկ,
Եւ ուզեցի վիշտը չափել անյատկ»:

Խորքին մէջ խաղապէս հաւատացեալ մըն էր Ահարոն եւ անմահութեան զաղափարին ուժգնօրէն յարող, ինչպէս իր «Թոռնիկ»ին նուիրած բանաստեղծութեան մէջ. «Հաւատա՛ դուն անմահութեան մեր հոգւոյն — Որ չենք սուղիր անխելեան մէջ մթին» (Սօսեաց անտառ):

Սիրային երգը կը շարունակուի, բայց այս անգամ զուտ ժողովրդական շեշտով, առանձնեղծով, մօքիւններով, հոգեբանութեամբ եւ տեղական գոյնով, իր «Գիւղի սիւսեր, եարոյ երգեր» շարքին մէջ: Հոս ալ զմայլելի է իր տաք, շարժուն ոճը, բնականութեամբ առլի, եւ զգացումի բեղունութեամբ: Զմայլելի է մանաւանդ ժողովրդական արտայայտութեան եղանակը, ներդաշնակ ու գրաւիչ: Այդ երգերը իր մէջ ծնած են ներշնչումով Օվաճըզի զաւառային երգերուն, ստեղծուած իրմէ, եւ ոչ թէ լոկ գրի առնուած: Բայց որովհետեւ ճաշակ ունի եւ զիտակցութիւն ժողովրդական երգերու պահանջին՝ տուած է անոնց այնպիսի շեշտ ու ձեւ արտայայտութեան, որ իր յղեալ գրական լեզուն պահելով հանդերձ՝ զգալի կը դարձնէ նաեւ ժողովրդական նկարագիրը:

ՊՈՀԵՄԱԿԱՆՔ հատորը կու գայ ամբողջացնելու «Մաղաղաթներ»-ու բովանդակութիւնը: Իր մէջ, ըսինք, կ'ապրի Փրական իր մայրաքաղաքային ժխորով, քաղաքակրթական նուաճումներով, ախտերով եւ անկումներով: «Ի Զատնի-Թըր-ժեպանի զիւղակին խաղաղութեան մէջ, կ'ըսէ, հինեցի կիողեցի Պոհեմականքը» (էջ 21 ծանօթ.): Պոհեմեան բնութիւնը, մարդերը, չեխուհին կու տան ներշնչումներ իր սրտի երգին եւ մենախոհութիւններուն: 1923-1928 ուսանողական կեանք մը ապրած, թէեւ արդէն քառասունը անց՝

եղաւ կանոնաւոր ունկնդիր մը դասա-
խօսութեանց, «բարձրամակ» փրօֆէ-
սորներու (տես «Համալսարան» երգը),
գիտութեան ձայնին հետեւող մը և քննա-
դատող մը միանգամայն, եւ սոհեմական
կեանքին ու սովորութեանց սիրահար:
Հոն է որ ձեւած ու լրացուցած է շարու-
նակութիւնը իր մեծ Սիրերգութեան եւ
այս անգամ Հոգիս մերմակ վարդերով
տիտղոսուած, եռատուն քառատողերով,
բաժնուած երեք մասերու «Օրհներգ» (14
երգ), «Առաջաստաւորում» (10 երգ) եւ
«Մեկնում» (10 երգ), թարմ երիտասար-
դութեան զբոսած Նիկիոյ մէջ 1915ին:
Կը յաջորդէ ապա ինքնավերլուծական
շարքը Էջֆ խորագրով, որ հոգեբանական
խորքովը կապուած է նախընթաց հատո-
րին Ինֆնախօսակցութեան հետ: Ահարոնի
տիպար էջերէն են իր «Պարզուկ սիրտեր,
ծաղկած դաշտեր» շարքը՝ ուր առօրեայ
կեանքէն կ'առնէ նիւթեր, ինչպէս Յեսա-
նողը, Աքոռաիւսը, Ծխանայարարը,
Հացագործը, Կոյաջիմը, Կաքնավանա-
նը, Ձկնավանառը, Սափրիչը, Փերեգա-
կը, որոնց պատկերները զծած առեն դի-
տէ բանաստեղծութիւն զարձնել զանոնք:
Նոյն ճարտարութեամբ բանաստեղծական
չունչ ու ուղի տուած է ուրիշ աննշան ի-
րերու ալ, «Իրերուս սիրերգը» բաժնին
մէջ, ուր կեանք կու տայ իր առօրեայ ա-
ռարկաներուն, այսպէս Վառարան, Զմե-
լիս, Գաւաթս, Մատիտս, Սանտրս, Ակ-
նոցս, Կոշիկներս, Գաւազանս, Հայելիս,
Անկողինս: Այս բոլորը մենակեաց բանա-
ստեղծին եղական ու յատկանշական էջե-
րը կը կազմեն, մարդու մը որ ապրած է
ինքնիր մէջ, իր առարկաներէն պաշտ-
ուած, որպէս սիրելիագոյն դէմքերէ, եւ
որոնց հետ իր ընտանութիւնը ծիծաղելի
զանալով հանդերձ՝ զարմանք կը պատ-
ճառէ, եւ Ահարոնը ինքնիր մէջ ճանչնալու
կը նպաստեն: Երկու մենախոհական շար-
քերն ալ զբոսած են Լը Ռէնսի, 1937ին:

ՍՕՍԵԱՅ ԱՆՏԱՌԷ՝ տասը տարի վերջ,
բանաստեղծին որպէս «մնացորդ» բեկոր-
ներուն ամփոփումը հրատարակ կ'ելլէ:

Ահարոն «Պոհեմականք»ի վերջ յայտարա-
րած էր որ «Մաղաղաթներ»ը եւ «Պոհե-
մականք»ը ըլլալով հինգ անջատ փոքր
հատորներու միացումը, կը կազմեն հեղի-
նակին անտիպ քերթուածներուն ամբող-
ջական գործը: Այդ երկու հատորներու
մէջ ամփոփած էր զինքը յատկանշող բո-
լոր էջերը, որոնց նախընտրութիւն տա-
լով հրապարակ հանած էր արդէն: «Սո-
սեաց անտառը» եւ յաջորդ երեք հատոր-
ները՝ զոր պիտի տեսնենք՝ կա'մ զբոսած
են 1939ին վերջ եւ կա'մ եթէ նախապէս
ալ զբոսած են, մաս չեն կազմած իր առա-
ջին երկու հատորներուն՝ իբրեւ երկրոր-
դական արտայայտութիւններ:

«Սոսեաց անտառը» կու գայ տալու
փաստը՝ որ Ահարոնի մէջ բարախած է
նաեւ հայրենասէրի սիրտ մ'ալ. իր Ֆեր-
տանէ՝ (տաղ կատակ-ողբերգական) աք-
սորի շրջանէն առնուած հայ սպայի մը
դժբախտ կեանքին պատմութիւնն է, որ
խորապէս հայ ու քրիստոնեայ մշակով
հանդերձ՝ կապուած է գեղանի խելացի
թրքուհիի մը հետ, եւ երկուքը միասին
ուխտած են նուիրուել համամարդկային
եղբայրութեան զաղափարականին: Հըն-
դետանոտեան երկար չափով, գոյնով ու
ողբերգութեամբ զբոսած երկտողներ են, և
իր բոլոր երգերուն մէջ՝ պատմողական ու-
ճի և արուեստի միակ նմոյշը հանդիսացող
քերթուած մը: Վշտին հեփեաքները՝ մեծ
մասով հայրենասիրական մոքիւ ունին,
ազգային կեանքէ, աւանդալէպերէ ներ-
շնչուած, մաս մ'ալ ընդհանուր պոլսական
կամ թրքական հէքեաթներէն, զբոսած
1941ին: Արեւելապաշտութիւնը արձա-
զանդը կու տայ իր հողի փարումին, ան-
մոռանալի յուշերուն, որոնցմով կապուած
է Արեւելին, իր ծննդավայրին, Իզմի-
տին, Պոլսոյ: Յրանապի հանգէպ իր հո-
գեկան խանդավառ սէրը յայտնէին վերջ՝
հրաւէր կու տայ իր եղբայրներուն՝ եր-
թալու Հայաստան, «պապենական երկիրն
անպատում», որուն կ'ուղղէ իր վերջին
ողջոյնը եւ կու տայ վերջին համբոյրը:
Գրուած են 1924-1941: Կը փակուի հատո-
րը խաղաղութիւն մասով՝ ուր այլեւս կը

զգացուի բանաստեղծին սրտին տենչը՝
իջնելու խաղաղօրէն հողին հանգստարա-
նը՝ հաշտուած բոլորին, ու մանաւանդ
Աստուծոյ հետ: Գեղեցիկ են հոս իր
հանդարտ ու իմաստուն խորհրդածու-
թիւնները՝ «Ժամանակ»ի, «Իմաստու-
թեան», «Երկրեան», «Խաղաղութեան»,
«անմահութեան» մեծ ու հիմնական դա-
ղափարներուն շուրջ՝ որոնք կու գան տե-
սակէտով մը կարծես սրբազրկու իր
քիչ մը յանդուգն արտայայտութիւնները՝
նախընթաց հատորներուն մէջ:

ԵՐԿՆԷՐ ԵՐԿԻՐ, 1957ին հրատարակ-
ուած, կու տայ մեղի ծերունի բանաստեղ-
ծին առակաւոր մտածութիւնները. հոս
ստեղծած է շարք մը յուշատետրներու՝
հերոսներուն, ուխտեալներուն, աղքատ-
ներուն, սուրբերուն, իմաստուններուն,
մայրերուն, խենթերուն, զինուորներուն,
գեհեհապարաններուն, զորս կը վերջացնէ
«Թողնիկներուս յուշատետրով»: Բանա-
ստեղծը կարծես այլեւս նիւթ կը փնտռէ
ներշնչումի, բուն կեանքը զաղբած է,
կիրքերը բոլորովին հանգարտած, իմաս-
տութեան, հոգեկանութեան օրհներգն է
որ կը կատարէ այժմ: Աշխարհն ու իր
փառքերը, մարդերն ու զոռողութիւննե-
րը, հարստութիւնն ու աղքատութիւնը
հանուած դէմ դէմի՝ առիթ կու տան իրեն
խոկալու, եւ իր վերջին խօսքը ըսելու:
Ունայնութեան զգացումը եւ իրապաշտ
րմբոնումը կեանքին եւ իր բոլոր երե-
ւոյթներուն՝ կու գայ բախել իր դրան եւ
զրչին: Բանաստեղծը խրատող բարի ծե-
րունի մըն է այլեւս, եւ ոչ թէ խոյացող,
թեւածող երիտասարդ: Այս երգերէն մաս
մը զբոսած է Մարտիի 1943-1945ին:

Հոս գրեթէ կը վերջանայ իր արտա-
դրութիւնը: Յաջորդ հատորը ԲԱԳԻՆԵՆ-
ՐՈՒՍ ԿՐԱԿԻՆ ԴԷՄ (Փարիզ, 1958) ամ-
փոփում մ'է նախկին շրջանի բանաստեղ-
ծութիւններուն, զբոսած 1908-1914, ու-
րոնք մոռաք գտած չեն իր առաջին հրա-
տարակութիւններէն ներս, ոչ «Մագա-
ղաթներ»ու եւ ոչ ալ «Պոհեմականք»ի:
Երբ զանոնք կը խմբէ հատորի մը մէջ,



Աղաբոն Տատուրեան, Սեւրի Մուրատեան վարժա-
րանի պարտէզին մէջ, 1938ի գարնան

Ահարոնի վերջին մտածութիւնը կ'ըլլայ
խնամոտ փունջով մը կենդանացնելու իր
քնարին անդամիկ թրթռացումները: Ա-
նոնք կը պատկանին այն շրջանին զրա-
կան րմբոնումին՝ որ կը յատկանշեն ա-
նոր առաջին քայլերը, երբ վենետիկէն
անցնելով Պոլիս՝ մաս կը կազմէր զրական
հոյիին՝ որ այդ օրերուն տաք գործունէ-
ութեան մը յծուած էր: Ահարոն ալ կը բե-
րէր իր բաժինը բանաստեղծութեան ու-
ղիով, մինչ իր մէջ ուժգին կը ներդրուէր
տակաւին դասական ճաշակը՝ առած Մը-
խիթարեան միջավայրին մէջ: Բագիննե-
րուս կրակին գէմի երգերը՝ բաժնուած
երկու խումբի «Գողթան» քնարով եւ պա-
րով՝ եւ «Հայկական գինիով եւ արցուն-
քով», կ'առնեն իրենց ներշնչումը մեծ մա-
սամբ հեթանոս կեանքէ Աթէնքի ու Հռո-
մի եւ նաեւ Հայաստանի. ձեւով պիրկ ու

Նշուած կազմ ունին, խորքով աղքատ ու հնարոյր, որոնք բանաստեղծին եսին հետ չունին հոգեկան առնչութիւն: Անոնցմէ այն երգերը՝ որ յունական գիցարանութեան զէմքերու կամ առասպելային պատմութեան կը վերաբերին՝ չինծու, արուեստակեալ անդրերներու կը նմանին, պաղ ու անհոգի. դրուած են արուեստի քանդակներ տալու համար կարծէք. այսպէս Ուլիսսոս, Յալթանակ, Գիւնթոն, Գիւնթոն, Արեւնա Պալլաս, Եղիսեան դաշտեր, Որփէոս, որոնք ժամանակավրէպ էին անշուշտ 1913ին ալ, երբ Ահարոն զանոնք գրին կը յանձնէր: Զեւին խնամքը, լեզուի ճկունութեան ճիշդ, հնչուն բառերուն հմայքը գլխաւորապէս կը զբաւեն զինքը. ան բառերու մոգութեան տակ է, իր ականջին մէջ են տակաւին Բազմալեզուի «ճիւղերովսն Հեկտորի», «Մաղուարտածօ՞ւ Աքիլլէսի» մը պատկերները և հելլենական գեղեցկութիւններու դասական ճաշակը, զոր յետոյ պիտի թօթափէ տալու համար աւելի իր անձնականութեան դրոշմը արտայայտող բանաստեղծութիւններ իր երկրորդ շրջանին՝ որ Փրակայով կը սկզբնաւորի: Յունական-հռոմէական գիցարանութեան ներշնչումներու կողքին կան նաեւ ազգային հին գիցարանութեան նիւթեր, դրուադներ, ինչպէս Վան, Շամիրամ, Անի, Արշակաւան, Ատրուշան, ու նաեւ կարգ մը միջազգային եւ հայ զէմքերու ողբերգութիւններ, ինչպէս Մովսէս, Յիսուս, Տանթէ, Նարեկացի, Մխիթար, Ալիշան: Ահարոն շարքեր ստեղծելու միտում ունի, արդէն այս շրջանէն կը յայտնուի այդ ձգտումը իր մէջ, որ յաջորդ տարիներուն աւելի եւս պիտի շեշտուի:

Բազմալեզու կրակին դէմի երգերը իր օրերու պարբերաթերթերու մէջ նախ երեւցած են մասամբ: Դպրոցական դրասեղաններու վրայ դրուած (Մ.-Ռ. վարժարանի աշակերտութեան շրջանին 1907-1909) ու Բազմալեզուի մէջ երեւցած ոտանաւորներէն միայն Զինուորը, Երգիքներուն տակ, Դաշտին մէջ, Օրերուն մասը, Նոյնըները («Բազմ.»ի մէջ խորագրուած


ձայնիկը), մտած են հատորին մէջ եւ որոնց վրայ կատարած է թեթեւ հպումներ³: Նմանապէս հետեւեալ կտորները՝ երեւցած «Մեհեան»ի մէջ. Անի (1914, թ. 1), Արշակաւան (1914, թ. 1), Զիարշաւ (1914, թ. 2), Գիւնթոն (1914, թ. 2), Արարչութիւն (1914, թ. 5):

Ահարոն լքած է թերթերու խորշերուն մէջ իր հետեւեալ երգերը՝ մոռացութեամբ կամ կամաւոր անտեսութեամբ: Անոնք Վարուժանի ազատ չափի շունչով, մարդկային կամ հայրենասիրական էջեր են, դրուած կորովով, աշխոյժ ու պատկերաւոր արտայայտութեամբ: Կը զգացուի անոնց վրայ արդարեւ Վարուժանի նմա-

3. Բազմալեզուի մէջ լոյս տեսած են իր սկզբնական նախափորձերը՝ Մ.-Ռ. վարժարանի աշակերտութեան շրջանին: Պատմութեան համար կ'արժանազանք դանոնք հոս: Բարձր կերպս (1908, 76), Զինուորը (1908, 114), ձայնիկը (1908, 114), Հօրս յիշատակը (1908, 179), Բուխերիկը (1908, 188), Զանգակը (1908, 226), Գիւղի տըն (1908, 228), Մեծածախիկը (1908, 263), Հայր մերը (1908, 263), Մեծ մայրիկը (1908, 284), Յալթան (1908, 333), Արուսեակը (1908, 333), Զին (1908, 371), Գիւնթոն (1908, 383), Ազատութեան երգը (1908, 457), Խուկը (1908, 506), Յոյսին գաւառ (1908, 561), Խաղաղութեան սաղմոսը (1909, 47), Տանթէ, տանթէ (1909, 80), Օրերուն մասը (1909, 113), Դաշտին մէջ (1909, 113), Տերվիշը (1909, 113), Երգիքներուն տակ (1909, 559): 1909ին Բազմալեզուի մէջ հրատարակուած են նաեւ քանի մը երգեր, դրուած Գառնիկի Մխիթարեան վարժարանին մէջ 1907ին. այսպէս Հիւժած վանիկը (1909, 79), Ալիքները (1909, 79), Վարդի փերքեր (1909, 214), Գիւնթոն (1909, 214), Կաքիլներ (1909, 214), Անթի (1909, 215. արձակ բանաստեղծութիւն մը գրուած Օվսճը): — Ահարոն մեծահասակ մը տած է Մուրատ-Ռաֆայէլեան վարժարանը, 1908ին արդէն 22 տարեկան է, եւ իր ոտանաւորները տակաւին ձեւաւորման մէջ են, ոտանաւորի գրչու ձեւերէն տարուած է, բնութեան եւ մարդկային սրտի փափկութիւններուն կապուած. իր փորձերը ձեւով ալ կը կարօտին վայելչութեան եւ ուժի: Պոլսոյ դրական կեանքին մէջ՝ որ կը յաջորդէ իր դպրոցական ապրումներուն, արդէն կը յայտնուի իր քնարին վրայ այն յատկանշական դիմը՝ որ իր դրական գործը պիտի բնորոշէ մօտաւոր ապագային:

նելու ճիշդ՝ ձեւական մասին մէջ միայն. ատոնք են Խալալը (Անահիտ, 1908, 48) զրկած Վենետիկէն, Քեզի բաներ պիտի ըսեմ (Անահիտ, 1909, 11), Գիւղակները (Անահիտ, 1909, 91), Անծախօքները (Անահիտ, 1911, 128), Դէպի տնակ (Բիւթանիա, 1910, Ա. տարի, թ. 5), Այսպէս երգեց (Բիւթանիա, 1910, թ. 6), Թշուառութիւնը (Բիւթանիա, 1910, թ. 8), Նոյնընդին հէֆեարը (Բիւթանիա, 1910, թ. 10), Գիւղակս (Բիւթանիա, 1910, թ. 11), Մեկնում (Բիւթանիա, 1910, թ. 25), Մարգարէութիւն (Բիւթանիա, 1910, Բ. տարի, թ. 1), Յիւսարտ (Ազատամարտ, 1913, թ. 786), Գնչուհիները (Ազատամարտ, 1913, թ. 23), Ողջակէզ (Ազատամարտ, 1913, 1337), Մարդերը (Մեհեան, 1914, թ. 4), Կեռասնին (Գեղունի, 1927, 23), Վերջին դատաստան (Գեղունի, 1927, 64): Տե՛ս նաեւ Ազատութ. շրթ. 1910-11:

Վերջին հատորը ԿԱՐՄԻՐ ԱՆԵՏԱՐԱՆ (1959), դրուած է 1946ին Մարտիկա եւ նուիրուած ամբողջապէս Սովետական Հայաստանի ծնունդին, կեանքին, կարմիր բանակի յաղթանակներուն, ճարտարարուեստական վերելքին, չորս մասերով՝ «արդարաւարութիւն», «աշխատութիւն», «ընտանիք», «հայրենիք»: Ահարոնի վերջին փափաքը, սրտազին կարօտը եղած էր անցնիլ Հայաստան եւ հոն կնքել իր մահանշանը, բայց չունեցաւ կարելիութիւն: Իր այս վերջին փափաքը գիրքով մը ուզեց հուսի հրապարակել, Կարմիր Աւետարանով, ուր բանաստեղծը բարոյախօսական ու աշուղային շեշտով, հոգեկան հանդարտ տրամադրութեամբ կը յայտնէ իր խանդավառ ձայնակցութիւնը այն ամէն բանին՝ որ կատարուած է ու կը կատարուի Խորհրդային Հայաստանի մէջ: Յորդորներ են անոնք քան թէ բանաստեղծութիւն, յորդոր երիտասարդին, յորդոր բանուորին, հայ մօր եւ հայ երիտասարդութեան՝ փարելու կամքի հզօր ազդակին, աշխատանքի բազուկին, ընտանեկան յարկին եւ հայրենիքի գաղափարին: Ծերունի Ահարոնը ա՛լ չունի երակին մէջ ուղեւորիչ մոռացին արիւնէն փայլարձակ,



Ահարոն Տատուրեան 71 տարեկանին, լուսանկարուած Փարիզ, 1957ին

խիղախ ու բարձրաթուիչ ներշնչումներ, ինչպէս արդէն երկնէր երկիրի եւ Սօսեաց անաւոր բովանդակութիւնը կը մատնէր իր անկումը վերին թռիչքներէն զէպի հէքեթայինը եւ բարոյախօսականը: Իսկ հոս աւելի եւս խրատող մը կը յայտնուի եւ իր կեանքին ունայնութեան վրայ անցողակի ողբեր խառնելով, մանաւանդ «ընտանիք» մասին մէջ, կը դատաւարտէ իր մէջ ամուրի մարդը կոչելով զայն «ոչի՛նչ, ոչինչ մարդ», եւ մենաւոր կեանքն ալ կ'որակէ երկսայր դաշտի մը: Ահարոն մահէն առաջ ալ կը վերադառնայ դարձեալ իր այդ հիմնական մտատանջութեան, որ ամբողջ կեանքով տառապեցուցած էր զինքը:

Թէ արդեօք Մոնմորանսի ծերանոցին մէջ ունեցա՞ւ պահեր զրին յանձնելու իր ամենավերջին խոկումները, կը մնայ մեղի անծանօթ. փափաքելի էր որ ատոր իրադէպները յայտնէին հրապարակաւ, եթէ երբեք կան իրապէս թղթիկներ, գրուած կամ ծանօթագրուած: Կրնայ ըլլալ որ կարապի վերջին երգ մ'ալ գոյութիւն ունենայ տաղանդի յետին փայլուն նշոյ-

Ահարոն «մտածող է եւ քաջ երեւակայող, բայց ոչ ճարտարագետ»:

Ուսանողի մը ճարտարապետութիւնը անշուշտ, կրկնենք, պիտի կայանայ տողերուն եւ տուններու պիտի ու համաչափ կազմին ու կառույցին մէջ. Ահարոն այդ մարդին մէջ վարպետ մըն է, ոչ մէկը մեր վերջին շրջանի բանաստեղծներէն այնքան արուեստի գիտակցութիւն, չափի զգացում ունեցած է՝ որքան ինքը, որ Դանիէլ վարուժանի հետ անգերազանցելի կը մընայ: Եթէ կ'ընդունի մանաւանդ որ ան «մտածող է եւ քաջ երեւակայող», ա'լ ինչ կը պահանջէ բանաստեղծէ մը. այդ առաւելութիւններով օժտեալ մը՝ անբասիր ըլլալու է ըստ ընտկան ողջմտութեան:

Աւելի անիմաստ են այն տողերը դրախտողին՝ ուր Ահարոն կը համարուի զուրկ ինքնատուութենէ, եւ թէ «իր կերտած չնքին քարերը իր մէջէն չէ որ կը պեղուին շատ անգամ, այլ կը ներածուին»: Փրակա իր մէջ հասունցուցած է կեանքի զգայնութիւնը, տուած է անոր ապրումներ՝ չփոփոյլ բուն կեանքին, թանձր ու իրական կեանքին, եւ այդ չարատանջօրէն ապրուած վայրկեաններուն արձագանգն է որ ան խտացուցած է իր երգերուն մէջ: Ուշիմ եւ հանդարտ ընթերցում մը անոր կտորներուն՝ պէտք էր հակառակ համոզումին առաջնորդել զբարխոսողը, եթէ կանխակալ մտային տրամադրութիւններ մուտք չգտնէին անոր զատաստանին մէջ: Իրականութեան շունչին գոյութիւնը անժխտելի է Ահարոնի մէջ, ապրումները եւ զգացումները իրն են, յայտնի այն նկարագրէն՝ որ կը համընթանայ մարդուն խառնուածքին հետ:

Երբ «Պոհեմականք»ը ըլլա տեսաւ 1939-ին, նոյն տարին «Սիոն»ի մէջ (1939, թ. 7, էջ 270-272) նման գրադատական հոգեբանութեամբ, հիմնուած հակասութիւններու վրայ, ուրիշ գրախօսական մը երեւցաւ, ստորագրուած Ա. Ս. Վ. է: Ան կը հաստատէ. «Ահարոն ունի բանաստեղծական որոշ շունչ եւ ջերմութիւն, ամէն ինչի բանաստեղծի զուրկութեանը մօտենալու նրբութիւն եւ չնորհ: Իր ապրում-

ները զիտէ պատմել հանդարտ ու մեղմ հոսող երաժշտականութեան մ'ընդմէջէն: Ունի պատկերներու, փոխարեքութեանց եւ մտածման գիւտերու առատ մթերք, ուրիշ եթէ զեղչենք անիրական յանգըդնութիւններն ու քրտինքով իրար բերուածները, կ'ունենանք սիրելի ինքնատու պութիւն մը՝ բաշխուած գործին մէջ: Մեծարենցի, Վարուժանի, Թէքէեանի լեզունին չափ կատարեալ է եւ ճկուն իր լեզուն, զոր կը գործածէ մեծ ճարտարութեամբ: Տաղաչափական կանոններու մեծ վարպետ մըն է անիկա, որ շատ վեր է ընթացիկ անուններու վտանգէն: Հայ մը չկայ իր տողերուն տակ. բայց փոխարէն կայ մարդը իր ձգտումներով, իր սէրերով եւ հոգիին խռովքներով»: Այս տողերը որ վերջաւորութիւնը կը կազմեն դրախտասականին՝ իրենց հակասական ալ ունին նախընթաց էջին վրայ: Յայտնի է թէ երկու յօդուածները զիրար բռնելու համար՝ երկրորդին հեղինակը կը կրկնէ նոյն միտքերը, նոյն գաղափարները առաջինին, բայց կը ցաւինք ըսելու, որ կը մեղանչեն հակասութեամբ առանձին առանձին եւ երկուքն ալ միասին միեւնոյն դրութեամբ:

Չենք ուզեր ըսել թէ անթերի է բանաստեղծութիւնը Ահարոնին, ու բոլոր երգերը անխտարար ներշնչումի մը ծնունդներ են. կան հոն արուեստով ձեւաւորուած երգեր, մանաւանդ երբ տաղաչափ մը մաս կը կազմեն, ընդհանուր գաղափարին զուգընթացաբար մտահոգութեամբ հիւսուած: Բայց թէ անմերդաշունակ ու անկատար էութիւններ են առ հասարակ, քաղաքիչ ու տալուրիչ չեն, թէ անոնց յատակը զուրկ է իսկական թախիժէ, կարօտէ, անձնական զգացումէ, պիտի ըլլար բոլորովին անիրական չափազանցութիւն, այնքան որ երկու գրախօսողներն ալ, յետ այսպիսի արտայայտութեանց՝ կը վերջացնեն հակասելով իրենք իրենց:

Եթէ կը հաստատուի թէ Ահարոնի երգերուն մէջ կայ «մարդը իր ձգտումներով, իր սէրերով եւ իր հոգիին խռովքներով», ա'լ ինչ կը պահանջուի իրաւ

(ըստ Օշականի) բանաստեղծ մ'ըլլալու: Երբ կ'ըսուի բանաստեղծի մը համար թէ իր երգին մէջ կը զգացուի մարդը «իր սէրերով, իր հոգիին խռովքներով», ամէն բան ըսուած կ'ըլլայ, նկատմամբ խորքի պահանջին: Եթէ ուրեմն կայ մարդը իր մէջ, կայ նաեւ անձնականութիւն, կայ ինքնարուի զգացողութիւն, եւ հարկ չկայ որ ընդունայն տեղ շեշտուին «քրտինքով իրար բերուած», կամ «զուրսէն ներածուած» անտեղի դատումները: Այդ դրախտողներուն կ'իյնար, արդար ըլլալու համար, փաստել օտարամուտ ձեւերը, գաղափարները Ահարոնի բանաստեղծութեան մէջ, ինչ որ չեն կրցած ընել:

ՀԻՆ ԱՀԱՐՈՆԸ ԵՒ ՆՈՐ ԱՀԱՐՈՆԸ

Անցնինք այժմ ներքին ուսումնասիրութեան Ահարոնի քերթուածներուն: Ստույգ է թէ Ահարոն հին շրջանի մը պատկանող անուն է. առաջին միջնադարին պատերազմը կանխող զրական խանգաւառութեան ծոցէն է որ կու գայ, անոր ջերմութեան տակ ծնած: Բայց իր կեանքին պայմանները շատ բան փոխած են իր մէջ. վարուժանի հետ իր մօտաւորութիւնը աչքի զարկած էր այդ օրերուն. այլ ինքը, կարծէք, գեղոհ այդ մերձեցումէն՝ ուղած է տարրերի կապէս, ըլլալ ուրիշ մէկը քան ինչ որ ժամանակակիցները կը շեշտեն՝ կամ կը պարտադրէին: Հայակործան դժբախտ օրերէն վերջ՝ Ահարոն մեկուսացած է բոլորովին աշխարհէն ու մտած ինքնիւր մէջ ու լծուած ինքնալերութեամբ աշխատանքին: Այդ ճիւղէն ու մեկուսացումէն ծնած է նոր Ահարոն մը, տարրեր հիներէն, տարրեր Պոլսական գրականութեան հոգեբանութենէն, առանձնայատուկ զիծով ու զոյնով, խորապէս անձնական ու տիպիկ: Անցեալին ուրացումովն է որ աշխարհ եկած են «Մագաղաթներ»ու եւ «Պոհեմականք»ի քերթուածները: Անցեալէն բոլորովին անջատուելու համար ալ, իր այն կարգի բանաստեղծութիւնները՝ որոնք նոր Ահարոնին մտայնութեան ու հոգեկանին հետ համաձայն չեն, չէ անցուցած իր «Բազմալեզու» կրակին գէմ» (թերթերէն

հանուած) երգերու սահմանուած հատորին մէջ: Որովհետեւ անոնք վարուժանի արուեստին մօտէն կը քալեն, այսպէս Խտէալը, Գիւղակները, Կեռասեմին եւն: Նոր Ահարոնը իր տարիքով է որ հինին կը պատկանի, բայց հոգեկան ապրումներով ներկայ դարու հոգեվերլուծական ներհայեցողութեամբ՝ նոր սերունդին նահապետը կընայ կոչուիլ: Սարաֆեան, Թօփալեան, Ժ. Յակոբեան (յիշելու համար նորերէն մաս մը միայն) արդի աշխարհահայեացքով է որ կը մօտենան բանաստեղծական ստեղծագործութիւններուն եւ նոր զգայնութիւններ կը բերեն կեանքի արդիական ապրումներու երգին մէջ: Նոր Ահարոնը սակայն որ անջատուած է հիներու նիւթերէն, մտահոգութիւններէն եւ նախասիրութիւններէն՝ չի կրնար բոլորովին թօթափել իր դասական զարգացումին տուեալները, կը մնայ անբաժանելիօրէն կապուած երգերու կառույցին մէջ՝ այն դասական պիտի քեֆնիքին, զոր ժառանգած է արուեստի եւ լեզուի խտապահանջ կանոններէն Բագրատունեան դարոցին: Թողած է հետադարձանք, աւելորդ դարգերը, թողած է արտաշխարհը, ներանձնանալու համար իր հոգիի ճղնարանին մէջ, ու տուած է իր բանաստեղծական խոհանքներուն ներքին, սեղմ խորքի մը ինքնաբաւութիւնը, բայց լեզուին ու արտայայտութեան ձեւին՝ կողմէ՝ չէ ուղած ուրանալ դասական մաքրութիւնը ու պիտի օրինապահութիւնը: Գիտակից է նորերու լեզուին ու արտայայտութեան ալ փոփոխութեան պահանջին, գիտակից է թէ արդի բանաստեղծութիւնը արդիական եղանակ ու լեզու կ'որոնէ իր երգին, համապատասխան նոր ժամանակներու մտայնութեան ու հոսանքին. բայց ինքը ձեւով հին, այլ ոգիով նոր ուղեց ըլլալ:

Ահարոնի մէջ կը զատորոշուի այսպէս հին շրջանի եւ նոր շրջանի բանաստեղծը: Արդէն նոր շրջան մը ստեղծելու համար է, որ տարիներով լռած, մենախորհած է, եւ յայտնուած է օ'ր մըն ալ փիւնիկ հաւուն պէս, զլուխ կանգնելու մեր նոր բանաստեղծութեան պանթէոնին: Կը սը-

խալին հետեւարար այն քննադատները՝ որոնք կը մեղադրեն իր երկարատեւ լը- ութիւնը եւ կը դատապարտեն հատու- ներուն թաքուն պահելը երկար տարիներ։ Եւ առաւելագոյն չափով կը սխալի «Մա- դաղաթներ»-ու գրախօսողը «Սիրոն»-ի՝ երբ առանց թափանցելու Ահարոնի շարժա- ութիւնները՝ կը պատգամէ այսպէս. «Մա- գաղաքներ»-ու ընթերցումը նոր օրերու գրականութեան մը չ'առաջնորդէր զմեզ եւ առով կ'արգարանայ իր խորագիրը։ Անի- կա մեզի կը բերէ նախապատեւագլխան (ընդգծումը մեզմէ)՝ զգայնութիւններու աշխարհէն մաղաղաթներու վրայ հաղիւ ապրիլ կրցող նշխարներ, որոնք իրենց ապրելու իրաւունքը մեծ չափով կը պար- տին իրենց հեղինակին»։ Ի՞նչ տխուր հասկացողութիւն ու մեկնարանութիւն։ Այս տողերը ցոյց կու տան թէ Ահարոն չէ հասկցում եւ զո՞հ է իր ապերձանիկ ճակատագրին։

Կը յիշեմ, - երբ խօսք կ'ըլլար հայ եւ օտար գրականութիւններու, կրած ազդե- ցութիւններուն եւ նախասիրութիւններու մասին - իր փառաբանները կը հիւսէր նախ հայ լեզուի մոզին՝ զոր Սուրբ Արսէն Բագրատունի կը կոչէր։ Հիացում ունէր Նարեկացիին, Գուշակին, եւ Փրանսակա- նէն՝ յաճախ իր բերանն էին Մալարմէի, Պոտլէրի եւ Վալերիի անունները։ Ահարոն կարգացող մը եղած է, եւ եթէ անցած են իր մէջ ազդեցութիւններ՝ անոնք իր հո- գիին պրիսմակովը այլափոխուած, անձ- նականացած են բոլորովին։ Ինքզինքն է որ մեզի կու տայ պեղելով իր հոգին։ Տեղն է վերջիչել «Սիրոն»-ի գրախօսին միւս անտե- դի ելոյթն ալ, որով կը դարձանայ թէ ի՞նչ շարժառիթէ մղուած, կամ հոգեկան ի՞նչ պահանջներ զոհանջելու համար զրուած են այդ քերթումները, երբ զանոնք «մեծ յաջողութեամբ» արդէն ժամանակին տը- ւած են Սիւմանթո եւ Վարուժան։ Ապա- ցոյց մը դարձեալ՝ թէ չէ հասկցում Ա- հարոն, որուն անձնական հոգեվերլուծա- կան եւ արդի մարդուն հոգեպնդումներու երգը երբեք Սիւմանթոյէն կամ Վարու- ժանէն չ'օգտուած չեն։ Վերջինս ունի է-

Ջեր հոգեկան անձկութիւններու աղէխարչ արտայայտութիւններով իր կարգ մը եր- գերուն մէջ (ինչպէս «Լքումը», «Թողէք մեծնամ», «Լոյսը») բայց էսպէս կը տար- բերին Ահարոնի երգին ներքին խռովքն եւ ներքին հոգեկան պահանջներէն։

ՅԱՏԿԱՆՇԱԿԱՆ ԳԻԾԵՐԸ ԱՀԱՐՈՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ

Ահարոնի բանաստեղծութեան նկարա- գրին ճիշտ բնորոշումը տալու համար հարկ է նկատի առնել ամէնէն աւելի «Մա- դաղաթներ»-ը գրելէ իր ամբողջութեամ- բը, (բացի Գիւղի սիւբեր, Եպոք Երգեր չարքէն, ուր ժողովրդական սերային եր- գի մաքիւնները կը կազմեն խորքը եւ չեն բանար մեզի Ահարոնի բուն հոգեկան աշ- խարհը), եւ «Պոհեմականքը»։ Այն երգե- րէն որ յատկանշական են Ահարոնի՝ կ'առ- նենք Էրմէքիբ բանաստեղծութեան մը տպաւորութիւններ, ճիշդ մը խորհրդա- պաշտութեան, Մալարմէական ներամ- փոփ, զուսպ, ներաշխարհային արտայայ- տութեանց եւ մանաւանդ Պոտլէրական շունչին։ Իր ներաշխարհը, կը կրկնենք Պոտլէրական է, կեանքի ու սերոյ իր ըմ- բռնումները, կենդանի իրականութիւննե- րու վրայ նետած իր արտաթափիժ ու զորչ հայեացքները, թշուառութեան թան- ձըր դոյութիւնը՝ որ անոր հոգեկանը կը վերածէ մրկային ամբոխումներու, հա- ցունելով ողբերգականութեան՝ ուր չափա- զանցութիւնն ալ քիչ մը իր բաժինը ունի։ Ան ներանձնացեալ մ'է, մարդեղէն եւ աշ- խարհէն փախչող, քիչ մը յոռետես հայ- եացքով ամէն բանի վրայ եւ մանաւանդ սերոյ պատճառած ցնցումներէն դարձած ալլամերժ։ Զուարթութեան չող մը, եր- ջանիկ ապրում մը չկայ իր քով, միշտ զանգատի ու թախիծի լարն է որ ուժգին կը հնչէ։

ՏՐՏՄՈՒԹԵԱՆ ԵՐԳԻԶԸ

Ահարոնի բանաստեղծութիւններուն խորքը ունի զլիաւորապէս երեք հիմեր. Տրսումիքիւն, սեռային յուզականութիւն եւ ինքնավերլուծում։ Իսկ ձեւը այդ բա-

նաստեղծութիւններուն՝ հիմնապէս անձ- նական է, զարդացած տպաւորութիւննե- րով խորհրդապաշտներէն անցած եղանա- կի։ Բացատրենք մաս առ մաս։

Ահարոնի ներաշխարհը, ըսինք թէ Պոտ- լէրական է. այս երկու բանաստեղծներուն մէջ կայ անժխտելիօրէն հոգեկան եղբայ- րութիւն մը։ «Չարին ծաղիկները» ժայթ- քումներ են սրտի ամբոխումներու, հի- ւանդազին ապրումներու, մարդկային ակաւաւոր բնութեան մերթ փառաբանու- թիւն են եւ մերթ հեղնութիւն ու ծիծաղ՝ ծլած ցաւի ու տրտմութեան կենդանի եւ յարաճուն աղբիւրէն։ Այդ արտաբանութիւնը կը տանի զինքը ահաւոր Չանձախտի (spleen), ջղային ու տենդապալար, ահա- բեկիչ սարսուռներով. ձանձրոյթ մը տա- րածուած ամէն բանի վրայ, կեանքի բո- լոր ձեւերուն, մարդեղէն եկող ամէն ի- մացական ու նիւթական շարժումին, ձան- ձրոյթ՝ որ կ'առաջնորդէ բանաստեղծը յո- ռետետութեան՝ քանի որ երկինքը իր վը- րայ կը ճնշէ ծանր կափարիչի մը պէս եւ երկերն ալ խոնաւ բանտ մը՝ ուր Յոյսը չ'ըջիկի պէս կը բախէ իր թեւերը պատե- րուն ընդունայն ճիւղերով։ Պարտուած Յոյսը եւ կեղեքիչ Անձկութիւնը, միակ ի- րականութիւնները որ իր մէջ եւ իր շուր- ջը կան, իրենց սեւ դրօշովը կը ծածկեն զանկը բանաստեղծին, խորհողին։ Լռու- թիւն, տխրութիւն եւ անձկութիւն, ահա ինչ որ Պոտլէր ունի կեանքէն՝ իր հիմնա- կան գիծերուն մէջ։ Պոտլէրի սրտին բա- ժինն է թանձրութիւն, ընկճող ու անդար- մանելի լքում, անարշալոյս գիշերը, խա- ւարին սէրը, փախուստը ամէն ինչէ որ պատրանք է, թշնամութիւն եւ սաղբանք՝ եկած սէր կոչուած բարիքէն։ Սիրուած էակը՝ վայրկեան մը վերջ տեսլութեան առարկան է արդէն, օձ ու վամպիր է, մահուան բաժակ է։ Խաւարին սէրը մեղ- քին քաղցրութեան հետ, ատելութիւնը, հեղնանքը, անէծքը եւ դժոխային դառ- նութիւնները այսպէս «Չարին ծաղիկ- ներ»-ու մէջ փոխն ի փոխ կ'եղանակեն։ Տրսումիքեան եւ Սեռային այսահարու- քեան (obsession sexuelle) մէջ կայ ան-

շուշտ ներքին պատճառական լծորդու- թիւն, մին միւսէն առաջ եկած ու զարդա- ցած։

Ահարոնի ներաշխարհը չունի այսքան մոռցուցիչութիւն։ Իր տրտմութիւնը կը բղխի իր հոգիէն, իր թշուառ ապրումներէն, իր նկարագրին այն զլիաւոր գիծէն որ կը մղէ զինքը մեկուսացումներու։ Կայ թախ- ծութիւն իր մէջ, բայց ոչ յուսահատու- թիւն. կայ տառապանքի զգայնութիւնը, բայց ոչ հոգեբաւիղային անել վիճակ։ Կայ դառնութեան զգացումը, բայց ոչ ա- նէծք։ «Սատան»ը ներգործիչ ոյժ մը նը- կատուած է բանաստեղծին. ինչպէս Պոտ- լէր ունի իր «Démon»-ները, իր «Ténè- bres»-ները, ոգիներ միշտ ներկայ եւ դոր- ծօն, որոնց սարսափին ու մտերմութեան մէջ կ'ապրի. Ահարոն ալ ունի յանկար- ծական ոգեկոչումներ ուղղուած սատա- նին, տեղի անտեղի։ Սատանը գուցէ առ- նուած է իրմէ ոչ որպէս հոգեղէն էակ՝ այլ որպէս անձնաւորութիւն դառնութեան ու սարսուռի։ Օր.

«Սընարիս մօտ բուսած տունկ մ'է՝ անարմատ,
Յայգին կուրծքէն մըլտած դաշոյն բուսածիտ-
Սակայն, բոյրն իր, կախարդ գինի վարդամատ,
Թափէ՛, սատան, սրտիս՝ աղուոր քու կուծէդ»։
(Մոլեխիկ. «Պոհեմականք»)

Տառապանքին հեշտանքը կը զգանք իր բոլոր երգերուն մէջ առ հասարակ, անկէ ծնած են իր ուժգնագոյն էջերը արդէն։ Տառապանք է կեանքը ամբողջապէս, կեանքը մանաւանդ թափառիկներու, թըշ- ուառներու որ դոհոյի մշուշին մէջ մը- թաղնած ուղեղով կը քաշքշեն իրենց կի- սաստուերային սողոսկումները։ Իրերը կը պարունակեն թուխ թոյրեր եւ մահացու կրակներ, թխաթաւիչ յորդումներ մար- դուն երակներէն ներս. ցաւը «մութ ալ- նաղբիւրն» է ամէն բանի որ կապուած է ապրելուն հետ։ Բայց այդ տառապանքն է որ, ըստ իրեն, կ'առաջնորդէ մարդը կատարելութեան եւ հետեւարար նաեւ հո- գեկան մեծութեան։ Ահարոնի քով, սա- կայն, այս հետեւութիւնը փիլիսոփայա- կան հանդամանք առած չէ, այսինքն վար- դապետական կամ դրոյթային խորհրդա-

լերալ. անհիկա աշխարհիս բոլոր բարեքներն ալ ունենար, իր բոլոր երազներն ալ իրականութիւններ եղած ըլլալին՝ տառապանքին երգը պիտի չըլլար բացակայ իր տաղարանէն, վասն զի անոր բնախօսական կազմը, էութիւնը կամ նկարագիրը, պիտի տրամադրէր զինքը միշտ դէպի մարդախոյս մենակեցութիւնը, իր բառով «մոնադի» կեանքը պիտի չհեռանար իրմէ: Ամէն բանաստեղծ քիչ թէ շատ ունեցած է ցաւին զգայնութիւնը ու զայն քնարի վերածած. Պետրոս Դուրեանի քով ատիկա դարձած է մորթին վրայ զգացուած յուսալքումի դառնութիւն, ելեկտրացնցում մը բնութեան, անդառնալի եւ վճռական. Միւսէի մէջ քիչ մը արուեստով չափազանցուած եւ ուժեղ դոյն առած «mal du siècle»-ի տխրականութեամբ, ժամանակի ծնունդը, դարուն պտուղ: Ահարոն հոգեւոր տխուր է, դժգոհ մարդերէն, շրջապատէն եւ մանաւանդ ինքնիրմէ. այս վիճակը իրեն բնական է. անշուշտ սրտի կեանքը քիչ գոհունակութիւններ տուած է իրեն, յետոյ նիւթականի միջոցներն ալ ժպտ եղած են միշտ, պարագաներ՝ որ հետզհետէ տրամադրած են զինքը ամէն բանի մէջ տեսնելու վշտին առկայութիւնը:

Տրամուրթիւնը, իր անբաժան ստուերն է, ամէն տեղ եւ ամէն բանի հետ ընկերացող: Իր աշխարհը արեւ չունի, իր սիրտը մութին մէջ պատրոյգի պէս կ'այրի եւ իր ճակատը գիշերներու լանջքին վրայ հանգչող, ինչպէս մօր մը, կ'ըմպէ մրուրոտ բաժակը չարչարանքին, եւ միշտ առանձին: Արդեօք տրամութեանէն պատճառուած է իր մէջ միւս ահաւորագոյն տաղանայը՝ սեռային յուզականութիւնը՝ թէ ասկէ կը բխին իրբեւ սկզբնաղբիւրէ իր վշտի թաւալուն երգերը: Կը հակիմ խորհելու որ Ահարոնի սիրտը անառիկ բերդ մը եղած է եւ ուր ան քաշուած, տարիներով մեկուսացեալ, ոչ միայն կեանքէն բան մը առած չէ, այլ միշտ խուսափած է անկէ, բայց նաեւ տենչալով անոր՝ տառապեցուցած է զայն համարտ պայքարներով: Տրամութիւնը

քաղցրացնելու ճիգով կանգ առած է երբեմն երբեմն իր ճամբուն վրայ, նայած է ու կրկին նայած պատկերին դէմ՝ ստուերի պէս անցնող, յուզուած է եւ կարօտով փնտռած ձեռք մը որ փայտիայէ խոնջ ճակատը (տես «Ժամադրութիւն», «Միւրսիկ» Պոետականի մէջ): Ահարոնի քրնարին հիմնալարը Տրամութիւնն ու քալիծն է, հետեւաբար, զոր մեղմելու համար թախանձած է կաթիլ մը դէթ սիրոյ բաժակէն: Ասիկա հոգեվիճակ մըն է, ծրնունդ իր նկարագրին. Ահարոնի մէջ մարդը յայտնուած է հակասական տարրերով, մէկ կողմէն հակամիտութեամբ լի դէպի խոր տխրութիւնները, միւս կողմէն բուռն տենչանքով դէպի կեանքի գեղեցկութիւնները եւ քաղցրութիւնները, որոնց տիրանալու անկարող՝ իր սրտի ապարանքին մէջ կառուցած է երազին կիւս անդրինները, եւ անոնց հմայիչ մտերմութեան մէջ ապրած ու ստեղծագործած: Իր նախասիրութիւններն են խաւարը, անդունդը, ցայգը՝ քան այլերն ու առաւօտներու պայծառութիւնը:

«Զեմ ուզեր այգդ, ինձ տուր, քէպէտ տգոյն է, կէս գիշերուան արցունքն աստղիկ շափիւղայ»:
(Ամառուան երկինք - «Պոետական»)

«Գիւղերու, աղբիւրներու պերճ տղան»
դարձած է այսպէս խաւարին մտերմը:

Երեւակայութիւնը տրամութեան սաստկութեանը տակ կը տանի զինքը նետելու ցնորքին սահմաններէն ներս, որ իր ուրուրային թեւերը տարածած բոլոր այն ճիւղերուն վրայ՝ որ հոգիի երգին նուիրուած են, կը մթաղնէ ամէն ինչ, յաճախ հակառակ նոյն իսկ բնական ողջմտութեան: Օրինակ առնենք իր Մոլիսիւնը («Պոետական»էն). հոն բանաստեղծը արտասովոր տպաւորութիւններու գերի մըն է. իր անկողնի սնարին կանգնած մոլեխինդը, դաշոյնի նման միտած ցայգի կուրծքին (այսինքն բոլոր գիշերուան ընթացքին), իր բոյրով՝ որպէս կախարդական գինիով կ'արբեցնէ բանաստեղծը՝ մինչեւ լոյս առաւօտ:

«Մինչեւ մարմարն անկարեկիր անկողնին Արեւոտի, եւ շիրմիս պէս լուռ բերկրի»:

Բայց հոս չի վերջանար ցնորական պատկերը, գիշերարոյս ծաղկին հասակը կ'առնէ տուփոտ կնոջ մը մարմին՝ տանջելու սիրտը եւ մղելու զայն խեղացնող պարի եւ հեշտավառ ցոփութեան: Առանձնութիւնը կը մղէ զինքը բանդադուշանքի, դադափարի «hyperbolisme»-ին, որ լոկ չափազանցութիւն մը չէ, այլ բնականին յեղաշրջումը եւ ցնորային արտառոցութիւն: Նման տողեր եւ խոկումներ կը դառնան ստէպ իր բանաստեղծութիւններուն մէջ, եւ որոնց մէջէն կ'ընդհամարուի արդէն սեռային ուժգին յուզականութեան տաղանայը՝ երկրորդ հիմնական դիմը Ահարոնի քերթողութեան նկարագրին:

ՍԵՌԱՅԻՆ ՅՈՒՋԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Սեռային տաղանայը, հոգետանջանքի վերածուած, մշտական հալածանք մըն է, անվերջ ընդհարում սրտին եւ երեւակայութեան, իրականին եւ ցնորքին, մտքին եւ տենչանքներուն անընդհատ պայքարով դարձած տեւական թշուառութիւն եւ կամ տեսակ մը դիւահարեալ հոգեվիճակ: Այսպէս Պոետի համար սեռը հաճոյքի դժոխքն էր, դառն ու նուաստացուցիչ, գերութիւն մը հաճոյական եւ բռնաւոր: Այս իմաստին մեղմագոյն ձեւով կարելի է մօտենալ Ահարոնի ալ հոգեվիճակին: «Մոլեխինդ»-ի վերջին տան մէջ այդ հոգեկան տուայտանքին արտայայտութիւնը կը ըզգացուի սա տողերուն մէջ.

«Անկողնին մէջ անդունդ մ'եմ անլուսին, Լանջիս բուսած տունկն այդ մոլի եւ լեղի. Ո՛հ, քող այսպէս գինին ու մի՛ղբ հոսին չրակեզ շուրթիս եւ ծաղկիս կատաղի»:

«Սիրող դեւ եմ» կ'ըսէ տեղ մը (Մատուռ - «Պոետական») որ ապարդիւն ապաշաւով, անգիտակից ու անկամ վերստին կը դառնայ հոն՝ ուսկից դժխեմ դալարումներ առած է իր սիրտը. կ'աղաղակէ «կի՛ն, կի՛ն, կի՛ն է աշխարհ» (Զեյնալան գարեջուր - «Պոետական») որ ոսկեփեր՝ փուրին մէջ գարեջուրի կը մարմնանայ ու խարուսիկ ստուերի մը պէս կը փախչի, կրկին գալու համար: Սրտի այս տառա-

պանքը, ցանկութեան եւ ցնորքին տուած սարսուռներով՝ սպառիչ այսահարութեան մը պէս ներկայ է Ահարոնի մէջ: Ցնորքը եւ երազը հոս կը նոյնանան յաճախ առարկային նոյնութեամբ. ամբողջ կեանքովը երազած է բանաստեղծը:

«Ես անուղղայ գինովն եմ, Տէր, երազին»
(Նաւաբեկութիւն - «Պոետական»)

Եւ ի՞նչ է երազածը. - կեանքին քաղցրութիւնները, սէր ու դորով, սրտի երջանկութիւն. ամբողջ կեանքովը «փեսայ»-ի դադափարէն դրաւուած է. դրական պատկերները ստէպ անկէ ներշնչուած են. փեսային դէմ «հարսը» մնացած է միշտ ցնորք մը, որ վայրկեան մը կը հետեւի իրեն՝ ստուերին պէս, ու կը չքանայ միւս վայրկեանին:

«Երազես դուրս ծառեր տեսայ, Ես շուքերուն տակ փեսայ»
(Ծառեր - «Պոետական»)

Ճամբորդի անկայան՝
ծովիս սրտին վրայ լազուարթ,
Աւազին ծոցն հեշտաբուխ՝
առագաստի ես փեսայ»
(Օրինքից Ժ - «Պոետական»)

«Փեսայօրէն հագուեցայ», «Խօլ փեսային հարսանիքն է այս առաւօտ» (Արցունք - «Մազաղաթներ»), «Որ մահուան հարսն աղօտանայ իր փեսայէն» («Մազաղաթներ»): Եւ դեռ սա տան մէջ.

«Երբեմն ի՞նչ էր որ ֆակտն այս տաղերուն Ոսկիներով կը պնէի, հարսի պէս, Եւ ընդառաջ անոց, փեսայ նըկարուն, «Կ'երթայի ես տաւով, քառով լուսագէս»:
(Գիշեր - «Պոետական»)

Պարզապէս յիշելու համար քանի մը պատկեր միայն: Անշուշտ յաճախութիւնը այս մղձաւանջ դարձած մտասեւեռումին՝ ունի իր նշանակութիւնը Ահարոնի կեանքին մէջ: Հուսկ եղած է փեսայ, սակայն «վշտի փեսայ»:

«Բայց, քողէք որ յիշատակով մայրենի՝ Անցնիմ հրապարտ, Բաւաբներէն մըտերիմ, Վիշտիս պայծառ փեսան եմ, մա՛տըս մատնի, Կ'աղաչեմ, մի՛ հանէք մատէս երբ մեռնիմ»:
(Մատանի - «Մազաղաթներ»)

Այս ցնորք-երազէն է որ սիրտն ալ առած է ցնցումներ, բանաստեղծութիւն դարձած ուժգնագոյն լարերով: «Ֆրոյտիզմ»ը ունի իր դերը բանաստեղծին մէջ, ո՛չ որպէս վարդապետական գրութիւն, որքան զժոյժ իրականութիւն ջղախին սարսուռներու, հոգեբանական հակազդեցութիւններու ներքին հաղորդականութեամբ կապուած սրտի կեանքին: Իր բանաստեղծութիւնները, իր ժամանակի մարդոց երգերը կը գտնեն այսպէս կողմնակի բացատրութիւն: Բանաստեղծութիւնը կը դադրի ըլլալէ ալեւ, այս պարագային, թաւային երգը բնութեան, սիրային բնական քնարերգութեան, հոգեկան զմայլանքներու, եւ կը դառնայ ընդհանրական սարսուռացող զգայնութիւն, դանկահարող ցնցում եւ ճարակող հրդեհ: Սէրը տանջանք է երազ ըլլալէ աւելի՝ մեր քերթողին համար, եւ բոլոր անոնց որ «Չարին ծաղիկներ»ուն ծանօթ են եւ անոր այրող շունչէն բան մը անցած է անոնց հազագին: Ան ալ, ինչպէս Փրանսացի բանաստեղծը՝ օձեր, սաղարանքներ կը գտնէ կընծ մէջ, եւ սէրն ալ սեւ մեղք կ'որակէ, զժոխքի բոցերով տոչորուն, եւ սիրահարը «գեղեցկութեան գերին»: Բայց այս բոլորով հանգեւ՝ Ահարոնի սեռային տագնապը միայն դառնութեամբ չի վերջանար, եւ չէ դարձած յուսահատութիւն ու անէծք, այլ քաղցր յոյսով մ'ալ լուսաւորուած է:

«Պիտի լոյսին ըսպասեմ խոնջ ճրագով,
Թեքեա հրսկող ճեւք մ'իր գալուկը բարի
Բաժակիս մէջ քափէ, անեղ գիրքիս քով,
Եւ այդ շիքէն, քոյր իմ, հրդեհա ալ մարի:
(Գիշեր - «Պոհեմականք»)

Ահարոնի նախափրակային կեանքը եւ Սիրեբգութիւնը զերծ է, սակայն, այս սեռային այսահարութենէն. իր «Հողիս կարմիր վարդերով» (Մագաղաքներ), եւ «Հողիս ճերմակ վարդերով» (Պոհեմականք) շարքերը, թէեւ զգացուած ու բարախուն իրականութիւն մը կ'արտաշնչեն, բայց քնարերգական ազնիւ շեշտով օժուած՝ չունին վերջին շրջանի սիրայիններուն նկարագիրը: Անոնք թաւային նըր-

բութիւն ունէին, մերթ թեթեւ՝ զեփիւռներու պէս, մերթ անըջային փափկութեամբ, տաք եւ տենչալառ ապրումներով զեղուն, եւ մերթ տխրանոյշ դալկութիւններով, երաժշտական տարրերակներու պէս զանազանեալ՝ քանի մը կարճ մօթիւններէ մեկնելով, լի բեղուն այլադրանութեամբ զգացումի երանգներուն: Ըզգացուած տողերը, երբեմն մահուան չափ հզօր, տպաւորիչ, բայց ոչ մռայլ ու ցընորակոծ:

ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒՄ

«Մագաղաթներ»-ու Ինքնալուսակցութիւն բաժինը մենասէր բանաստեղծին աւելիմանքը կու տայ, եւ ուր ան կը վերլուծէ ինքզինքը՝ բանալով ծածուկ ծալքերը հողիին: Արձանագրած է այնպիսի ապրումներ, որոնք զուգէ խուսափելին սովորական պայմաններով օժտուած բանաստեղծներէն: Ան կը սիրէ խորասուզուել յաճախ անսովոր երեւոյթներուն մէջ իրերու կեանքին. «Ղօղանջներ»ը միայն զանգեկներու զանազանութիւններ չեն, այլ ձայներ որ կը բարձրանան, առանց աղաղակելու, ամէնէն խոնարհ ու ամէնէն քնքուշ տարրերէն, ձայնէ՛ր կապոյտ, ձայնէ՛ր մռայլ, արցունքի կարկաչ, լոյսի ծիծաղ որ տիեզերքին հսկայ ընդհանրութեան մէջ իրենց արձագանգը կը տարածեն զօղանջներու պէս, զոր փափուկ զգայնութեամբ օժտուածներ միայն կարող են հաւաքել եւ լսել: Լսել բոլոր ձայներուն մէջ ներկային եւ ապագային՝ նաեւ իր մահուան զօղանջը, իր զագաղի սնարին հսկող զարկածալիտ մոմին հատնումին, անաղմուկ ու խորհրդաւոր ձայներուն վերջինը՝ զոր բանաստեղծին հողին զգացած է մեկնելէն առաջ այս աշխարհէն: - Բայց կեանքը զոր կ'ապրի հոս, մահէն առաջ «Առեղծուածային վարդն» է, զոր ինքը կը փետէ ամէն օր իր վաղքին մէջ, մերթ ըմպելով սէր ու հեշտանք անկէ եւ մերթ դառնութիւն ու ցաւ: Կ'ապրի անոր եղբրական հեղանքին տակ, բայց կը սիրէ ապրիլ. անոր բոյրէն զինով կ'իյնայ դալկազմ, կը նուազի, բայց կը վերակեն-

զանաճայ աշխարհովը բարի աչքերուն. կը փետէ թերթերը անոր, բայց ան կ'աճի ա՛մէն տառաւ միշտ աւելի: - Այս բանաստեղծութիւնը խորհրդապաշտ արտայայտութեան յայտնի նմոյշ մըն է իր քով: Իր կեանքին ցաւերէն զլիսաւորը՝ իր մեհակութիւնն է, զոր «Մատանի» երգովը կը պատկերացնէ. ան կախարդական յուսութիւն է մանկութենէն ի վեր տրուած իրեն եւ որուն ճաճանջը ըմպելով կ'ելլէ զառիվերէն իր սրտին, միակ նուէրը այս կեանքին՝ տրուած աղքատ տղու մը, որ տառապանքն ու սրտաբանքը ունեցած է որպէս բաժին իր օրերուն: Այդ մատանին՝ իր վշտին փեսայութեան մատանին եւ զաւր կ'աղաչէ որ մահէն վերջն ալ չհանեն մատէն: - Այս երեք երգերը, որոնց նիւթին մօտեցանք քիչ մը մանրամասնութէն, կը պարզեն մեղի կեանքին հանդէպ իր ունեցած ըմբռնումը եւ իր հոգեկան արամադրութիւնները: «Ճերմակ մաղեր»-ուն սարսույր, դաւաճան հայելին իր օրերու զժրախտ վաղքին, եւ ապա «Մեհանուագ»ը այնքան խորապէս զգայուն լարերով, եւ յաջորդող երգերը կը բանան այլեւս բանաստեղծին ճիւղերը՝ խորասուզուելու իր ներաշխարհին մէջ եւ մասա մաս քննելու ինքզինքը: Գեղեցիկ ու կուռ տողերէն ահա քանի մը պատկեր.

«Հոգիէդ ներս նգնաւորիլ եւ մեհնալ,
Մոնազիմ պէս որ կը հսկէ գիշեր ու տիւ.
Հետըդ նըրազ մ'իսկ չունենալ,
Տեսնելու սի'րաղդ, քառա՛մ վարդ քերթով անքիւ:
Ոսկի մուրնով դուն քեզ այսպէս միշտ խորտակել,
Ճեղքիլ մարմարն՝ արարչական կոյս լըռութեան,
Եւ, մրնախար, գուռըդ քակել,
Մինչեւ հնչէ գանգն հիմաւորը՝ խաչիդ բուրեան»:

Այս տողերուն ներքեւ տառապող սրտի տխուր հեւքը այնքան ուժգին է որ անկարելի է չտեսնել Ահարոնի մէջ կամաւոր զոհ իր թաքուն մենակեցութեան.

«Այնքան ներփակուիլ, ներաշխարհանալ,
Որ չըկրնաս դուն քու դուռըդ բանալ»:
(Բնակար - «Պոհեմականք»)

Ներանձնութեան զգացումը հոս կը հասնի իր զագաթնակէտին, նոր զգայնութիւններով, զոր մեր հինները չունեցան եւ

որ իր մէջ ծնած է մասամբ մը իր նկարագրէն եւ երկրորդ՝ իր մտահոգութենէն բանաստեղծութեան տալու ներաշխարհային, հոգեվերլուծական բնոյթ: Իր ինքնավերլուծումը կ'առնէ աւելի բուռն շեշտ «Ծիծաղ»ին մէջ. հոն բանաստեղծը որպէս քնարահար ծառ, հակած է իր սրտին վերայ՝ փռուած լճակի մը պէս. այդ սիրտը կը ցոլացնէ ծառը՝ (բանաստեղծը) իր բոլոր զոյղերով, օրօրումներով, թախիծով ու ծիծաղով. ծիծաղ որ կը ծաղկի իր շըրթուքին վրայ ընդդէմ մարդերուն, կիներուն եւ աշխարհի բոլոր տարրերուն, որոնք կարծես կը հեղեն զինքը իր ցաւին ու տրտմութեան մէջ, անագորոյն ու չար ծիծաղը, սրտին դառնութեան պտուղը, որ իր միակ զէնքն է արհամարհելու համար ամէն ինչ, խուժանն ու կեանքն իսկ:

«Եւ մինչ ինձի իրեքն անգամ կը դաւեն,
Եւ անոնց վիզին զարդ կու տամ ծիծաղս, իրեքն
Եւ անէ՛քի այս կատարին, [Ժպտալէն:
Ուր յամր ու գոռ գանգակներ են կեանքն ու տարին,
Կը ծիծաղիմ, կը ծիծաղիմ ու կու լամ,
Եւ ծիծաղիս կայծով՝ դըժոխք մը կ'ըլլամ»:

Հոս արդէն պոռթկական շունչին զգալի դառնութիւնը կ'առնենք, առանց անոր խոր չափազանցութիւններուն հասնելու: Դժբախտ բանաստեղծը զայրոյթ ունի իրեն դէմ, աշխարհին դէմ, բայց այդ զայրոյթը ձեւական է միայն, Ահարոնի հոգեկանութիւնը չ'իջներ սուսաստեղծութենէն, նաեւ իր միւս շարքին մէջ որ «Էջը» խորապրելը կը կրէ Պոհեմականք հատորին, եւ ուր իր վերլուծական ճիւղերը ներաշխարհի կեանքին կը հասնին վերջնագոյն աստիճանի: Դարձեալ խորհրդապաշտական պատկերով մը «Տրտմութեան մեհան» երգին մէջ, ցաւին զգացումը ազնուականացած՝ կը դժէ վայրն անձանթ իր ցաւերուն, ներկայացուած մեհանին մը զագաթնաբով:

«Մայրաքաղաքի մեհան մ'էր շատ նին,
Երեսն քերտած պեղումով անեղ.
Երբ կ'իջնէր բախին հարուածն ամէն հեղ,
Ի խորոց կու լար դարերու ոգին»:

Պեղումով յայտնուած, եւ պեղողն ալ ինքը բանաստեղծը՝ որ հարուած առ հար-

ուած կը բանայ ծաղիկները իր սրտին, եւ ալիք մեհեանին խորը իջնելով մոմի լոյսով կը դտնէ իր եսը, իր հոգին աւերակ սէրէ ու կեանքէ: Այդ աղէտին դիմաց միակ ցանկութիւնը բանաստեղծին է փախչել ինքնիրմէ:

«Ու կը պաղատիմ ցայգէն անյատակ ձամբայ մը անձէս, սիրտէս փախչելու»:

«Կանթեղ»ին (ուրիշ երգ մը) լոյսով կ'իջնէ քուրմ-բանաստեղծը իր հոգիին անդունդներուն: Կանթեղ մը հոգիէն վար կախուած է, որուն լոյսը մերթ հանդարտ է եւ մերթ հողմավար: Դժուար է դայն վառողն ու մարողը, անծանօթ է բանաստեղծին: Գիշերային լուսութեան ու թախծութեան մէջ, ուր իր հոգին կ'ընդարձակուի եւ կ'անհունայնայ՝ եւ այդ տարօրէն ահաւոր կանթեղին մէջ՝ որ իր մտքին լոյսն է, կը պատկերանան դէմքեր սուրբերու եւ սատանայի, որոնց սարսափէն կը դղրդի սիւնադարձ տաճարը, եւ կ'անցնին անոր մէջէն ամբոխներ, «սիրավառ ստուերներ», ու ինքը սեւաքօղ «պանդոյրը», ինկած դետնամած, ձեռքը գիրք մը՝ որ կ'այրի: Բանաստեղծին էութիւնն ալ կը հասնի այսպէս կանթեղին պէս դադանի եւ լոյն հիւծումով: Ահարոնի հոգեվերլուծումը կը գտնուի դադանիքի մը գիմաց, որ կը մնայ իրեն համար թաքուն առեղծուած. իր նպատակն է տալ պարզապէս հոս հոգեվիճակը, առանց բուն պատճառներուն իջնելու, թէեւ դժուար չէ կուսել: Իր հոգեվերլուծումը կ'երթայ առաջ. ունկընդերնք սա գեղեցիկ տողերն ալ իր «Էջը» բանաստեղծութենէն (Պոհեմա-կանք-էն):

«Ժըպիքի սուգակ, ես ինքս իմ մէջ կ'իջնեմ ի խոր, Ամէն անգամ որ հոգիս ծովը պղտոր՝ Զուգումնալիս կ'ալեծըփի, կը տըւայտի, Վիս վիսի մէջ ընդիւզուած եւ մութ մութի:

Բայց ի՞նչպէս մտնել առանց լոյսի, երբ միտքը այնքան աղօտ է: Կը թափանցէ սակայն, ներսը, բոցերու եւ երանգներու հանդիսավայրը, ուր գալարումներ եւ յիշատակներ պլլուած են իրարու: Անքննելի սրտին յատակն է արգէն բանաստեղծը,

բայց կախարդական դադանիքը կը մնայ անլուծելի, բոցի ծարաւ մը կ'այրէ իր շրթունքները եւ իր շուրջը հրդեհ ու դժոխք է:

«Թող գլխիկայր իջնեմ, ըմպեմ անդունդն համակ, եւ ետեւէս գոցեմ, գոցեմ՝ դուռն ամբափակ»:

Հոգեվերլուծումի ճիգը ուրիշ բան չի գտներ յատակին վրայ իր հոգիին, բայց եթէ աւեր, սարսափ ու գիշերային թախծութիւն: Իր բոլոր երգերը կը վերջանան այս հետեւութեամբ, որմէ կարելի է եզրակացնել այն ինչ որ նախապէս ալ ըսուեցաւ, թէ ան տրամութեան ահաբեկիչ տիրապետութեան տակ անդէկ ու տատանեալ նաւն է, գիշերախոյս կորսուած կեանքի ծովուն վրայ: Այս շարքին վերջին եօթը կտորներն ալ «Հին քանդակ», «Մոլեխինդ», «Սփինքսի տուայտանք», «Տեսիլք», «Մըրկալոյս մոմ», «Ներարիւնում», «Հոգեսարսափ», կը պատկերացնեն ճշմարտային փորձերը բանաստեղծին կերտելու նոր սիրտ մը հինին աւերակներէն, բայց հոն ալ թաքուն գեւը իր քրքիջով կը հեղնէ դայն ու ասիկա ամէն իրիկուն կը կրկնուի՝ երբ ան կ'առանձնանայ իր մենութեան լուսութեան մէջ:

Այդ ներաշխարհը, որուն վերլուծման նուիրուած է քերթողը՝ ցնորական մանրաշխարհ մըն է, որուն մէջ բովանդակ տիեզերք մը կ'եռայ ու կը ծփայ, իր մարդկային ու անմարդկային դէմքերով, կիսաստուերային մեռելապարով, գինեփրփուր շրթներով եւ գալարուող ըղբներով, որոնց մէջէն կը յառնեն կիներ, մանուկներ, որոնք կ'երեւին վարագոյրի մը ընդմէջէն, բացուած իր ներաշխարհին վրայ, ու յանկարծ կը չքանան. «Տեսիլքի» երգն է, զոր կը վերջացնէ խոստովանելով կարօտը մայրենի ձեռքին, որ մեղմէ հուրը ճակատին ու մոռնայ ինքզինքը՝ արցունքին մէջ ցաւը կիսող մօր մը սրտին:

Ամէնօրեայ է այս տաղնապը, առանձնութեան լարին վրայ անձայն իր նուագումը՝ վիհերէն հանելով խնձիղ, երգ ու ծիծաղ. այս տաղնապը զոր ինքը «Ներարիւնում» կ'անուանէ՝ կը դառնայ մահ-

ուան պէս դառն ու հոգեստանջ իրականութիւն, նա մանաւանդ իր անվերջանալի կրկնութեամբը:

«Ողկոյզի պէս ես գիս ամէն օր կը քամեմ Թասի մը մէջ, համակ սատափ, լոյս ու պոքիւր, եւ չեմ հատնիր ըմպումներէն վերջ քիւրաքիւր, Այլ, փրփրալից կը ծովամամ, առասպել մ'եմ:

Ու կը մնայ առասպել մը իր բոլոր ինքնավերլուծումներու ճիգերէն վերջն ալ, ու կ'ազադակէ դժութիւն, որովհետեւ ալ չի տոկար այն հրդեհին՝ որ կ'այրէ զինքն ու իր քնարը. այլեւս հրդեհուած քաղաք մըն է ինքը, որուն վրայ անցեալի ու ներկայի մոխիրն է ցանուած: Սարսափէն ու շաթափ կը փախչի բանաստեղծը իր սիրտէն դժխեմ նաւորդի պէս՝ բոցաշունչ հոգեվերլուծումը ըրած առաջատար: «Հոգեսարսափ»ն է, վերջին մարդը իր պայքարին, փախուստով հրդեհուած սրտի քաղաքէն:

Ի՞նչ բանի կը յանդիման Ահարոնի ինքնավերլուծումները. — Ատոնք կը յանդիման թշուառ իրականութեան մը նկատմամբ՝ կամ բանաստեղծական լեզուով՝ պատկերացման, այսինքն արտայայտութեան այն տիպեր յատակին՝ որ իր հոգեվիճակը կը կազմէ, սիրոյ եւ յոյսի տենչանքներով ջերմացած երջանկութեան մը կորուստին հանդէպ: Իր արտայայտութիւնները հանդէպ: Իր արտայայտութիւնները հոգեվերլուծումներ են, ուրեմն, կորսուած երանութեան մը, ու ճիգ մը վերստանալու դայն, բայց ի դուր. չկայ անշուշտ ճակատագրականութեան չեղում, բայց կայ յուսալքման բուռն շեշտ, որով կամայ ակամայ խորտակողը կ'ըլլայ ինքն իսկ իր փայփայած սիրոյ եւ երջանկութեան ապափայած սիրոյ եւ երջանկութեան խորտակումին, եւ անկարող տալու վերականգնում անոնց, իր ցաւը կը դառնայ հեղանք ու ծիծաղ կեանքի բոլոր երեւոյթներուն առջեւ ու կ'ըլլայ կամաւոր սերմնացանը տառապանքի դժոխէ ցայգածաղիկին որ թունաթէտ մոլանէ ինչպէս: Այս թշուառ կացութիւնն է որ երեւան կու գայ իր հոգեվերլուծումին աշխատանքին վերջ, ընդդէմ, չեղում, ամ տարբեր պատկերներով միշտ նոյն

հոգեվիճակին՝ որ առարկայականօրէն դոյութիւն ունի իր ներաշխարհին մէջ: Ահարոն չի ձգտիր կեանքի բարոյական կամ իմացական բարձր նպատակ մը հետապնդելու, իր երգը չի բարձրանար գերազոյն ձեւերու եւ ազնուական դադափարական-ներու ոգեկոչման, այլ լոկ կը մնայ ընդհանուրի մէջ, իրրեւ ողբ մը իր հոգեկան անմխիթար ու թախծոտ վիճակին:

ՀՈԳԵՎԵՐԼՈՇՈՒԹԻՒՆԸ

Հոգեպաշտութիւն մըն ալ կայ Ահարոնի բանաստեղծութիւններու դադափարային խորքին մէջ, առանց յատկապէս շեշտուած ըլլալու: Այն բոլոր նկարագրութիւններուն մէջ որ «Մագաղաքներ»ու առաջին մասերը կը գրաւեն, իրենց աշխարհիկ ու նոյնիսկ բարբարոս արտայայտութեանց մէջ, ուր մանաւանդ կը քի ազատ պատկերացումներ անխտիր նիւթ կու տան իրեն եւ մինչ իր երեւակայութիւնը խիզախ թեւեր կ'առնէ սրբազան շունչին խոռնելով երբեմն անտեղի բացատրութիւններ անգամ, Ահարոն աստուածաթիւններ անգամ, Ահարոն աստուածապաշտ կը մնայ, հոգիի անմահութեան հաւատացող մը եւ կ'ընդունի Աստուծոյ դոյութիւնը՝ որպէս նիւթէն անջատ հոգեկէն Գերազոյն էակ, որուն, ըստ իրեն, կը ձգտին հուսկ բոլոր հոգիները՝ մաքրուած իրենց տիղմերէն կեանքին ու մեղքին: Իր նկարագրած թշուառութիւններու, ախտավարակ հոգիներու եւ ապականեալ միջավայրերու ղեհնական կենցաղին, աղքատիկային հիւծումներու ընդմէջէն անուղղակի կ'ընդունի (երբեք ժխտուած) բարի եւ մարդասէր Աստուծոյ մը դերը: Ահարոն նիւթապաշտ մը չէ, հետեւաբար, երբ նոյնիսկ նիւթին ու մարմնին փառաբանանք կ'ընէ, որովհետեւ նպատակ ունի անոնց նկարագրութեան մէջ, զոր կը կատարէ յաճախ նողկանքով ու խղճալով, անուղղակի ընդդէմ մաքուր եւ երջանիկ մարդկութեան մը հակապատկերը: Ունկընդերնք դադափարապաշտի սա մաքրաշունչ տողերը սիրային երգի մը «Օրհներգ» Թ. («Պոհեմականք»):

«Կապույտն ի վեր սուգունի,
գազաբն ինչպէս բարտիին,
Հըպարտօրէն անայլայլ,
գիրկս եօթնամեայ ծիածան,
Վե՛ր մարդերէն, որոնցմէ
մեղք եւ անէծք կը կաթին,
Եւ ժըխտէն անխին
որ կ'ակօսէ մեր ցամբան»:

Իր երգերուն մէջ անպակաս են ողբերգ-
չումներ աստուածային օգնութեան, աս-
տուածային լոյսին. անթիւ են այդ կարգի
տողերը. ինչպէս

«Ի սէր անոնց, Տէ՛ր Աստուած, զիս արձակէ արդ».
«Մահէս առաջ կ'ուզեմ տեսնել որ, Տէ՛ր իմ»: Եւն.

Սակայն երբեմն ուղղակի, մերթ ալ ան-
ուղղակի արտահայտութեան մօտեցող
պատկերներ ունի, Մաղդաղենացին եւ
Յիսուս հանուած դէմ դէմի («Մաղդաղի-
նէ կը սրբանայ»), ուր միտքը մաքուր եւ
աստուածալայելու է եւ լոկ ձեւականո-
րէն անդգոյժ. ասիկա իր քիչ մը ազատա-
խոհութեան վերագրելի թերութիւն մըն
է, որուն ծանրութեան գիտակցութիւնը
չունի, հարցին փափկութիւնը նկատի առ-
նելու մտայնութեան պակասէն: Ինչպէս
հոս, նմանապէս այլուր, երբ նուազ չը-
նորհալի ու նուազ սրբազան շունչ կը կրեն
իր քանի մը տողերը, որոնց մէջ խօսքը
կ'ուղղէ Աստուծոյ, Քրիստոսի՝ պատկե-
րաւոր եղանակով, հոն ալ չի նուազիր սա-
կայն իր յարգանքը եւ պաշտամունքը դե-
րագոյն աստուածութեան մը հանդէպ: Իր
«Ձատիկ»ը (Պոնիմականի) օրինակ՝ որ
կրնայ վերաբերել ըլլալ փափուկ ականջ-
ներու իր արտահայտութեաննե-
րով, եւ ուր սրբազան շունչին հետ խառ-
նուած է մարդկայինը, թանձրը, իր խոր-
հելու եղանակէն կ'առնեն իրենց պատճա-
ռը: «Ողջոյն, եղբարք, մեղքէս յարեալ
ինքն Աստուած», եւ կին մը լիւրւած՝ որ
կը պատկերանայ այդ պահուն մտքին
մէջ՝ մեղաւոր մարդկութեան պատկերն
է, սրբուած բարձրացած սրբարար չը-
նորհքով Քրիստոսի: Այս է միտքը հոն
քերթողին՝ թէ եւ ձեւին անպատշաճու-
թեամբը եպերելի:

Անմահութեան զաղափարին ձայնակ-

յութիւն մը եւ ոչնչականութեան դէմ
յայտնի արտայայտութիւններ են իր սա-
տուգները նոյն երգէն.

«Ես իմ հոգիս յարուցեալ մարդն առաջին,
Ահեղ հերժումն համայնակուլ ոչընչին»:

Սակայն չեմ գիտեր ինչպէս արդարա-
ցնել իր մի քանի տողերը (Օրհներգ ԺԱ.
Եւ Սփինիսի տուայտանի, «Պոնիմա-
կանք»էն), ուր իր անդգոյժ արտայայտու-
թիւնները ուղիղ բանի սահմանէն անդին
կ'անցնին, վերաւոր՝ աստուածաբանական
գիտութեան ու տուեալներու առջեւ: Հոն
առաջինին մէջ երբ մարդուն դոյութիւնը
կը վերագրուի Աստուծոյ կատարի՝ ի-
րբեւ սարգ մը նետուած երկրիս վրայ,
աններելի է ամէն կերպով: Խօսքը ուղ-
ղուած թշուառի մը.

«Թէ ինք կատակ մ'է այստեղ,
սա՛րգ իր քիչով մոլորում,
Զոր վար նետեց ինքն Աստուած՝
իր ձանձրոյթի մէկ առտուն»:

Երկրորդին մէջ խօսքը տրուած անա-
պատի սփինքսին, որ խորհրդապաշտ ար-
տայայտութեան բանաձեւով բանաստեղծն
է որ կը պատկերացնէ: Խժամայնութիւն
մըն ալ հոս զաղափարի, եպերելի դար-
ձեալ.

«Զիս ըստեղծող անագորոյն արարչին
Հայեարմանի եմ գեղազարդ.
Տիեզերքին կապուած անիւ մը չնչին՝
Կը գործեմ գայն հոն ուր կիրքերը կ'անին,
Ուր ոգիներ բարդ ի բարդ՝
Կը բողբոջին իրքեւ վարդ»:

Այս տողերը բանաստեղծութիւն ըլլալէ
կը զաղբին այլեւս, երբ մտքի եւ փիլի-
սոփայական ողջմտութեան վրայ գի-
տակցօրէն կամ անգիտակցօրէն վէրք կը
բանան: Ահարոն չի զգար ծանրութիւնը
իր այդ անտեղի բացատրութիւններուն,
իրեն համար անոնք դրական ձեւեր են ը-
սելու: «Ձանձրոյթի» արտայայտութիւնը
Աստուծոյ մէջ՝ նիւթապաշտութեան եւ
դրապաշտ «déisme» յանդգնարանութիւն-
ներէն առաջ կու գան եւ ընդհանրացած
նիւթապաշտ զրոյններու քով: Ահարոն
կրկնող մըն է զժբախտաբար հոս անոնց

մտքերուն՝ անդգոյժ եղանակով: Հասկնա-
լի է ցաւին եւ անբուժելի տրտմութիւն-
ներու պատճառած աղէտը հոգիներու վը-
րայ, որոնց ուժգին պոռթկումները սրտի
պատառոտումներու կրնան ալ ներուիլ,
բայց ոչ՝ երբ անոնք անպատշաճութիւն-
ներու կը հասնին: Լսենք սա տողերն ալ,
ուր վիշտին սաստկութիւնը մղած է բա-
նաստեղծը չափազանցութիւններու, երբ
մանաւանդ խորհինք՝ որ Ահարոն պատ-
ճառ իսկ չունէր այդ աստիճան յոռետես
արտայայտութիւններու տեղիք տալու.

«Աստուած, այլիւս յոգնեցայ
կրելէն պատկերդ յաւիտեան,
Պատկե՛ր, անձիս ու սրտիս
վրայ դառնօրէն քանդակուած,
Որ զիս ապա, ցայգ եւ տիւ,
վերածեց քու հեգնութեան,
Ես քու ձեռքդ մարմարին
փորուած սատան գետնամած:
Ուսերուս ծա՛նք է այս բեռն՝
անսահման գանկս աչքիդ,
Արիւնս է գետ, ես ափի՛ն
բուսած շամբուտ ջով առ ջով,
Վանականի խուցէն ներս
աչքերս երկու մոմ անբոց,
Սիրտն յարգեցաւ գոր տըլիք,
ողողեց զիս մըռունչով:

Բազումներու գոյգ մոլորներն
ա՛լ կարող չեմ ես տանիլ,
Որոնք անդու կը գամեն՝
զիս իմ խաչիս, խա՛չս ինծի.
Եւ չեմ կրնար, Տէ՛ր, շարժիլ
ու տանիլ բեռս անարդիլ,
Զի ես հեղոյս մեղսակիր՝
դժոխքն ինծի գամեցի:

Այս գեղեցիկ ոտանաւորին առաջին տան
քանի մը անտեղի բառերը երգին զաղա-
փարային ներդաշնակութիւնը կը տանին:
Ահարոն այս տողերը գրած է Նիկիա 1915-
ին, որ՝ ինչպէս ինքնիսկ կ'արձանագրէ
երգերուն վերջը, եղած է իր անհատա-
կան առաջին աքսորաւայրը: Իր կրածին
մեծատելի են չափերը. Ահարոն կը սիրէ
չափազանցել զոյնները՝ նոյնիսկ եթէ չեն
համապատասխաներ իրականութեան. այդ
պարագային իր տողերը կը դառնան վի-
րաւորիչ բնական ողջմտութեան: Զհա-

կասելու համար միւս կողմէն անոր
հաւատացեալի մը հոգեկանութեան (որ
կարգ մը երգերուն մէջ յայտնապէս կը
նշմարուի), իր այդ տրտմունքի խօսքերը
անտեղի «hyperbolisme»ներ միայն նը-
կատուելու են, բանաստեղծութեան զգա-
ցական տարրին ուժգնութիւն տալու հա-
մար, քանի որ այդ տողերը գրած ատեն՝
ան քանակներ տարեկան երիտասարդ էր,
երբ դեռ իր մեկուսացումի դառնութիւն-
ներուն չէր հասած: Բայց այս կարգի ար-
տայայտութեանց հիմնական պատճառը իր
նկարագիրն է եւ մտային կազմը: Թափա-
ռիկ կեանքը զոր անցուց, աւելի ենթար-
կուած քան ենթարկող իր կամքին արտա-
քին աշխարհը, տնտեսական անձկութիւնը
մէկ կողմէն, եւ իր տեսական մարդու հա-
յեցողական մերձեցումը կեանքի բոլոր ե-
րեւոյթներուն՝ միւս կողմէն, բնական
ճամբով դուռ պիտի բանային իր այս տե-
սակ արտայայտութեանց, որոնցմէ կըր-
նար խուսափիլ եթէ քիչ մը ազատ խոհան-
քը գիտնար չափաւորել:

ԽՈՐՀՐԴԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ ԶԳՏՈՒՄՆԵՐԸ

Ահարոնի մէջ խորհրդապաշտութեան
ձգտումները իրենց բնական ենթահողը ու-
նին նախ անոր հոգեկան ու մտային կազ-
մին մէջ. ան որքան բնութեամբը պարզ ու
մանկունակ, այնքան արուեստով (առնը-
ւած արտայայտութեան եղանակի լայն
իմաստով) բարդ ու մթին ձեւերու ձգտ-
ող մը եղած է սկիզբէն ի վեր: Խորհրդ-
պաշտութիւնը հետեւաբար իր հոգիին
մէջ էր իրբեւ իր բնական հունին: «Մե-
հեան» ամսաթերթին ուխտեալներէն ըլ-
լալով, անոր զրական հանդանակին «Ինք-
նատպութեան ու ձեւի անձնականութեան»
պարտադիր պահանջները զգաց ամէն բա-
նէն աւելի: Եւ որովհետեւ այդ օրերուն
խորհրդապաշտութիւնը ժամանակին զը-
րական նորոյթն էր Պոլսահայ զրահանու-
թեան մէջ՝ արուեստի անկախութիւնը քա-
րողով «Մեհեան»ի քուրմերէն իւրաքան-
չիւրն իր ազատ ըմբռնումին ու ճաշակին
համաձայն, նաեւ հետեւող մըն էր այդ

հոսանքին: Գեղամ Բարսեղեան եւ Ահարոն (Երկուքն ալ Մեհեանական)՝ զուգէ ալ զգծին սիրահարները եղած էին զլիսաւորապէս: Թէքէեան նմանապէս, առանց «Մեհեան»ի հանդանակին ստորագրած ըլլալու, ու Սիամանթօ հեռաւոր ժրնեւէն ձայնակից էր անոնց:

Խորհրդապաշտութեան պահանջն էր հիմնել արտայայտութիւնը խորհրդանշաններու վրայ, անուղղակի եղանակով, թաքուն ու քողածածկեալ ձեւով մը ըսելու ինչ որ բնականօրէն ու բացայայտօրէն կարելի էր ըսել: Տափակ, սովորական դարձած ձեւերը լքելով՝ ձգտել անսովորին, արթնցնել ենթադրականացանք բանաստեղծին հոգիէն ներս, զգացումներ եւ ապրումներ՝ որոնք ընդհանրապէս կը խուսափին դիւրաւ եւ առանց կարեւորութեան կ'անցնին: Անանձնական (impersonnel) բանաստեղծութիւնը Պառնասեաններու՝ նոր բանաստեղծներուն հոգեկան բաւարարութիւն չէր տար: «Ես»ը պէտք չէր նկատուիլ արտաքին տարր մը, մանաւանդ թէ քերթողութեան կեդրոնական առանցքը ըլլալու էր ըստ իրենց: Ահարոն պէտք չունէր դրական այս դաւանանքին պարտադրութիւններուն, վասնզի ան իր հոգիին մէջ, ինչպէս ըսինք, կը գտնէր բնական բերում մը, սիրելով ապաւինիլ թաքուն զգայնութիւններուն, խորհրդանշանային պատկերներու՝ իր բանաստեղծութեան հիմնական գիծերուն մէջ: Սիրուած գէմքերն էին խմբակին՝ Սիւլի Փրիւտոմ մը, ամէնէն աւելի ներքին բանաստեղծութեան ներկայացուցիչը, Մալարմէ, Ալպէր Սամէն, եւ Պոտլէր՝ եղական երգիչ չարատանջ հոգեկանութեան:

Այս գիծը սակայն, խորհրդապաշտութեան դարգացեալ ձեւովը, Ահարոնի մէջ ամէնէն աւելի յայտնուեցաւ Փրակայի իր ուսանողութեան չըմանին եւ անկէ վերջ: «Մաղաղաթներ»ու առաջին մասերը, անոնք որ խորագրուած են Յայգաֆաղաֆ, Սէրը փուշէ պսակով, Խեղմ մարդերուն պատմութիւնը, Գեհեմականք, Բանաստեղծը կ'աստուածանայ իր այս արուեստին արտայայտիչ զլիսաւոր էջերը կը կազ-

մեն, ինչպէս նաեւ Ինֆնախօսակցութիւնը եւ Էջֆ բաժինները:

Ահարոնի բանաստեղծութեան յղացքը այն թեթեւ, դիւրին քնարերգութեանը չէ, որ թոյլ է իր կազմով, թէեւ հեշտալի ու պայծառ արտաքինով. ան կը նախընտրէ խորհուրդը, միտքը, հնչականութիւնը եւ պիւրկ, խիտ ու փակ ներքնականութիւնը զգացումին եւ արտայայտութեան: Նիւթերը զոր ընտրած է, նիւթերը զոր իր երեւակայնութիւնը իրեն շոյլած է առատօրէն, չեն այն սովորականներէն, որոնց կը հանդիպէինք իրմէ առաջ: Խորագրերն են անգամ իր երգերուն արտասովոր են, թեւադրիչ ու տալուորիչ՝ հեռու սովորականի եւ ընկալեալի ձեւերէն, որոնցմէ կը խորշի իր արուեստագէտի բժականդրութիւնը: Յայգաֆաղաֆը օր. ինքնին ամբողջականութիւն մը ունեցող, ներքին ազերսով օղակուած գաղափարի մը խորհրդանշանային արտայայտութիւնն է, որուն առանցքը կը կազմէ Սիրտը (սիրահարօտ լուղորդը) իր խորութեան յատակէն, որպէս ծովամօյն աստղ՝ չարժելով ամէն ինչ մարդուն մէջ. հոս եւ յաջորդ մասերուն մէջ բանաստեղծը արտակարգօրէն անհուն պայտակը ունի խաւարներու, կրքի կախարդութիւններու: Զգացումները բնականի ու սովորականի իրենց ընթացքն ալ փոխած են, լոյսին տեղ խաւարը կը նախընտրուի, երկինքներու պայծառութեան տեղ գիշերային տրամուծութիւնները, եւ մաքուրին տեղ՝ պղտորը, հանդիստին տեղ՝ խռովքը: Հոգեկան վիճակի մը, բայց աւելի արդի մարդուն վիճակին եւ տրամադրութիւններուն արտայայտութիւնն են ատոնք, մարդերու՝ որ ճշմարտութենէն ու լոյսէն կը սարսափին:

«Ու մի՛ լքեսք ձայնս անգամ, երբ քեզ կանչեմ, — Ես քու տեսէդ պիտի անշուշտ սարսափիմ, — Շարունակէ լիւզդ, յիշուա՛կ ծովանեմ, Թող մութ ըլլայ... մութը կարն է քու եւ իմ»:

«Խորհուրդին տապանը» երկրորդ երգը նոյն շարքին, ըսուած դարձեալ սրտին համար, խորհրդանշական արտայայտութիւն է, եւ նաւապետն ալ որ անհուններու

ծարաւը ունի՝ ինքը բանաստեղծն է: Ուրիշ երգի մը մէջ մեռելի պատկերին տակ իրեւ խորհրդանշի՝ նորէն բանաստեղծը ծածկուած է, անոր դերեղմանին այցելուն ալ ինքն է, որ իր արցունքի շիթով իրեւ իր մոմին լոյսով կը լուսաւորէ ցայլը՝ ուր թաղուած է ան, ու մարելով այլեւս լոյսն արցունքին՝ կը ցանկայ դուրս գալ անդունդէն:

«Գերեզմանէս յարութիւն առած մեռելն եմ մըքին, Որուն ձեռքերն ըսպիտակ, փետրտելին իր հոգին, Նոնիներուն կատարէն անհունօրէն կը ծաղկին» (Խորհրդաւոր դերեղմանը կը ծաղկին)

Արտայայտութեան այս եղանակը խորհրդապաշտներու յատուկ է. այսպէս են Պոտլէրիները, Մալարմէիները, եւն.:

Փուշէ պսակը խորհրդապաշտական պատկեր մը դարձեալ, որ զլիսաւոր գաղափարը կը կազմէ երկրորդ շարքին «Մէքը փշէ պսակով» ուրիշ մը պիտի ըսէր հարթ ձեւով՝ սիրոյ չարչարանքի տաճ, սիրոյ տուայտանք կամ տառապանք: Մինչդեռ Ահարոն կը ձգտի քողարկել, խորհուրդը դնել ու մտածումին խորութիւն տալ՝ անուղղակի կատարեալ զործածութեամբ: Յիսուսի տնօրէնութեան ու խաչին ողբերգութեան մօքիւնէն առնելով իր պատկերները՝ չարչարուած սիրտի մը քայքայումները կ'երգէ:

Կանքեղը բանաստեղծութեան մէջ («Էջֆ» — Պոհեմականքէն) դարձեալ ենթադրութեամբ: Յիսուսի տնօրէնութեան ու խաչին ողբերգութեան մօքիւնէն առնելով իր պատկերները՝ չարչարուած սիրտի մը քայքայումները կ'երգէ: Կանքեղը բանաստեղծութեան մէջ («Էջֆ» — Պոհեմականքէն) դարձեալ ենթադրութեամբ: Յիսուսի տնօրէնութեան ու խաչին ողբերգութեան մօքիւնէն առնելով իր պատկերները՝ չարչարուած սիրտի մը քայքայումները կ'երգէ: Կանքեղը բանաստեղծութեան մէջ («Էջֆ» — Պոհեմականքէն) դարձեալ ենթադրութեամբ: Յիսուսի տնօրէնութեան ու խաչին ողբերգութեան մօքիւնէն առնելով իր պատկերները՝ չարչարուած սիրտի մը քայքայումները կ'երգէ:

խորհրդանշով՝ միշտ նոյն հոգեկան արտայայտութեան եղանակին կը պատկանին:

Բառերով ստեղծուած «մոգութիւն»էն դատ՝ խորհրդապաշտները կը սիրեն վերացական գաղափարները անձնաւորել. Երազմ, Վիշտը, Չանդրոյքը, Յայսը, որպէս անդրաշխարհիկ պղատոնեան ընդհանուրներ նկատելով՝ մեր զգացական վիճակին տարտամ եւ ենթագիտակից ապրումները կը վերածեն այդ տիրապետող գաղափարներէն եկող ներքոր տալուորութիւններուն: Սակայն բառը ընդհանրապէս (դոյական, բայ) անոնց համար ողի ունի, ամբողջ գաղափար մըն է, որուն պաշտօնն է պատկերներ ստեղծել, փոխաբերութիւններ կազմել ուժգին մերձեցումներով: Այսպէս վէրլէն, Մալարմէ, Պոտլէր, Ահարոն գիտեն դոյն տալ իրենց տողերուն՝ բառերուն սովորական կամ ընթացիկ նշանակութիւնները չընկելով դէպի պատկերաւոր արտայայտութիւնները, փոխանակ խորհրդանշաններով խօսելու չարունակ, որ անկարելի է:

«Pour un cœur qui s'ennuie,
O le chant de la pluie!
(Paul Verlaine - «Romances sans parole»)

— «De l'éternel Azur la sereine ironie»
— Brouillards, montez! Versez vos cendres montones,
— Le soleil se mourant jaunâtre à l'horizon!
(Stéphane Mallarmé, «L'Azur»)

Անճրելին երգը, խաղաղ հեգմանք, մըշուշներու մոխիրը, դեղնիւր արեւուն, վերի տրուած օրինակներուն մէջ բառերուն անսովոր մերձեցումներ են գոյնի մտահոգութեամբ:

Նմանապէս սա կտորները՝ Պոտլէրին.

«Des cloches tout à coup sautent avec furie
Et lancent vers le ciel un affreux hurlement»
(Spleen)

«Voilà que j'ai touché l'automne des idées»
(L'ennemi)

«Et la solennité de la nuit, comme un fleuve

Sur Paris dormant ruisselait»

(Confession)

«Hurlement»ը ղոզանցի տեղ գործածուած՝ տխրութեան կեղեքիչ զգացումը կը շնչէ։ «l'automne des idées», հասակի հասունութիւնը տալու համար, եւ կամ զիշերուն խաղաղ էջքը գետակի մը հոսանքին պատկերով բացատրուած, փոխարեւարար ըսուած՝ որ կու տան տողերուն նոր փայլ եւ գեղեցկութիւն։ Ահարոնին ալ արտայայտութեան հրապուրիչ կողմը կը կազմեն բառերու գիտակից ընտրութիւնները։

«Որոնց վերեւ իր հոգին կը հեկեկար կերկրում»
(Մազաղաթներ)

«Անոնց հրդեհն հազիր ինձ հետ, գերդ մտերիմ»
(Մազաղաթներ)

«Գլուխներու ծով, մազերու փրփուրով»
(Մազաղաթներ)

«Ո՛րքան պիտի գայ դեռ անոնց վրայ թառիլ
Ազամանդեայ լուսնակն հոգւոյդ սարսուռն»
(Մազաղաթներ)

«Գլուխս հիմա բարձին վրայ գիշերին»
(Մազաղաթներ)

Այս քանի մը տողերը, դէպքով հոսկէ հոնկէ առնուած, ցոյց կու տան բանաստեղծին զգալու եւ մտածելու նորութիւնը, թարմութիւնը եւ սէրը ուժգին երանդներու։ Յաճախ, սակայն, երբ կ'ընչայնչ հափաղանցութիւններու մէջ, կը ստեղծէ մըթութիւն մ'ալ, ուր սակայն միշտ կարելի է թափանցել։

Խորհրդապաշտներէն առաջ ալ բառին խնամքը, իմաստի փոխարեւարական գործածութիւնը կար ի հարկէ, բայց իրենցմով է որ աւելի շնչուած է, ինչպէս այսօր գերիբաղադրութեամբ (Surréalisme) առաւելագոյն չափերու կը հասնի եւ բոլորովին անիրականին սահմանները կը թեւակոխէ։ Այս գրական հոսանքը ծայր տըւած 1924ին, որպէս թէ Ժերար տը Ներվալէն ծագում առնելով, արդիներու նախադրութիւնը կը կազմէ, նաեւ մեր մէջ։ Բայց Ահարոն զուսպ ու չափի գիտակցութեան մարդ՝ չտարուեցաւ անկէ։ Այս ուղիւթեան վրայ կու գան դատակարարը-

ւել, մեր արդիագոյն գրողներէն ոմանք, որոնց համար՝ համաձայն գերիբաղադրութեան սկզբունքներուն՝ գոյութիւն չունի ոչ մէկ օրէնքի սահմանափակում, ոչ մէկ մտքի հակակշիռ եւ ոչ մէկ գեղեցկագիտական մտահոգութիւն։ Անոնց համար գրականութիւնը կը կայանայ արտայայտութեան մը մէջ մտքի՝ ձերբազատուած բոլորովին տրամաբանական, բարոյական եւ գեղեցկագիտական պայմանաւորումներէ, այսինքն թոյլատրելով ըսել ինչ որ կ'անցնի մտքէն, ըսել ինչպէս կ'ուզուի, խորհրդածել ինչ ձեւով որ նուազ կը տրամադրէ բացարձակ անկախութեամբ։

Այս դրուքիւնը հաւանաբար «dadaisme»էն յառաջացած, էլիւարի մը, Անարէ Պրըթոնի մը գլխաւորութեամբ այսօր տիրապետող հոսանք մը դառնալ սկսած է, նուազ չարագոյն քան դադայականութիւնը (սկսած 1917ին), ուր անմիտ կամայականութիւն մը բոլորովին խղած էր կապը ընդմէջ բառին եւ իր նշանակութեան։

Այս հարցին ուղեցինք դպչել, (որուն ուրիշ առթիւ կը յուսանք անդրադառնալ) անոր համար՝ որ մեր ներկայ գրական սերունդին մէջ կան գծախտաբար անվաւերական անուններ, որ կը կառնին այս գրական հոսանքին՝ ապացուցանելու համար իրենց անամէջ դատարկութիւնը։

ԻՐ ՏԵՂԸ ՄԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՁ

Իր տեղը մեր գրականութեան մէջ՝ է Վ. Թէքէեանի կողքին, իր հոգեպաշտ բանաստեղծութեամբը հոգեդրայր մ'ըլլալով աւոր՝ (ինչպէս Պոպլէրի՝ միջազգային գետնի վրայ, իր խառնուածքին գիծովը)։ Երկուքն ալ ներհայեցողութեանց բանաստեղծներ, Թէքէեան աւելի իմաստասիրական խոհումներու հակումով, մինչ Ահարոն մարդկային հոգեկան տառապանքին վերլուծական ճիգերով։ Թէքէեան աւելի հանդարտ, աղնուական, հաւասարակշիռ հոգեկանութեամբ, Ահարոն ցաւազարօրէն վշտաղնեալ եւ արտակարգին ձգտող։ Թէքէեան գոյներու միահարթ

խառնուրդի սիրահար, Ահարոն բարդ ու խռովալից, բազմազոյն տարրերով յայտնուած։ Տարբերութիւնը անոնց մէջ իրրեւ խորքի նկատառում՝ անոնց տարբեր խառնուածքէն է որ կ'առնէ այլազանութիւնը, բայց երկուքն ալ կ'երթան համընթանալու նոյն գիծով հոգեբանական վիճակներու բանաստեղծութեան։ Խառնուածքի այդ տարբերութիւնէն կը յառաջագայի նաեւ ձեւակաւ աննմանութիւնը։ Թէքէեան կը սիրէ պարզ ու վճիտ արտայայտութիւնը, հակառակ Ահարոնի՝ որ մռայլ եւ ըստուերոտ եղանակները կը նախընտրէ իր հոգեկան բարդ, անկախուն եւ յարափոփոխ խռովքը տալու համար։ Խորհրդանիշ ու պատկեր գործածուած է երկուքէն ալ։ Բայց մինչ Թէքէեան բնական, յստակ ու թափանցելի է, Ահարոն աւելի ուժեղ, թանձր, հեռաւոր մերձեցումներով կը կերտէ զանոնք։ Երբ Թէքէեանի տողերուն վրայ կը զգանք լայն շունչ մը, բնական ընթացք մը, ներդաշնակ ու սահուն, Ահարոնիններուն վրայ՝ որոնք լեզուականօրէն հաւասարապէս ներդաշնակ են՝ կը դանդաղ կուտ, խոհումով ծանրացած եւ զանազակ ու ընթացք։ Այս համեմատական ակնարկները, կ'ենթադրուի, հիմնուած են երկուքին ալ լաւագոյն եւ յատկանշող կըտորներուն վրայ։

Ահարոնի բանաստեղծութիւնը իր եղանակով բնոյթով մեր արդիներու արտադրութեանց քով բացառիկ հանդամանք ունի, անոնց կը ձայնակցի իր ոգիովը, արդիական զգայնութիւններու եղանակային մօքիւններով, բայց քեֆնիփակաւ կատարելութեամբ կը մնայ գերազանց։ Իր երգերուն հնչակաւութիւնը, կառուցքին առաւելութիւններով՝ որպէս լեզու, որպէս բառական ճոխութիւն, որպէս կշռոյթ ու յանդարանութիւն՝ մարդկատրոսական լիութիւն ունի եւ համեմատութեան չի գար

միւսներուն հետ։ Իր բանաստեղծութիւնները (մեծ մասամբ) ներգոր, ինքնակաց, հնչական միութիւններ են, իրենք իրենց մէջ առած. անոնց վերեւ կը թեւածէ վարպետի ձեռք մը եւ ուժեղ երեւակայութեան մը հովանին։ Պէտք է ընտելանալ իր եղանակին, իր արուեստին՝ կրկնակի կամ երրակի ընթերցումով։ Ատոնք յաճախ կը նմանին երաժշտական դժուար կտորներու, որոնց ուժեղ քեֆնիփը կը ծածկէ վայրկեանին անցողակի զգացումը, յուզական տարրը անմիջականօրէն վերերեւող, բայց որ իր խորքին մէջ զայն կը պահէ թաքուն բուստերու պէս ծովերու։ Անոնցմէ իւրաքանչիւրին մէջ կայ հոգեկան տուամ մը բանաստեղծին, գիշերներու հըսկումով խորհուրդ գարձած եւ ահազնութիւն զրկեցած։ Անոնց մէջ իր հոգին է որ կը յայտնուի մռայլ թերաստուերներու, լոյսի ու մութի խաղերով անտառի մը պէս, ուր յաճախ խառնուած է իրականին հետ անիրականը, ցնորայինը՝ հուժկու երեւակայութեամբ եւ յափշտակութեամբ պատկերացուած։ Իր ստեղծագործելու կարողութիւնը կը յայտնուի նաեւ այն երգերէն՝ որոնք աննշան իրերէն կ'առնեն իրենց ներշնչումը. ծիծաղելի կը թուի այս գծով Ահարոնի «Իրերուս երգը» շարքը, բայց անոնք կը մնան որպէս ապացոյցը այն մոգիչ արուեստին՝ որով գիտէ բանաստեղծութեան վերածել ամէնէն անյարմար առարկաները, տալով անոնց ոգի, շունչ, ապրում եւ իմաստ։ Անոնց մէջ ալ կը զգացուի միշտ անդրադարձ ցոլացումը իր լռակեաց եւ մենախոհ բանաստեղծի հոգիին։ Ահարոն չեղաւ երկրորդական դէմք մը. իր եղանակութիւնը ինքնին կու տայ իրեն իրաւունք՝ մտնելու հայ գրականութեան պանթէոնէն ներս եւ գրաւելու իր աթոռը։

Հ. ՄԵՍՐՈՊ ԶԱՆԱՇԵԱՆ